



Գիտություն

ՆՈՅԵՄԲԵՐ

№ 11

(228)

2010 թ.

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի թերթ

Հրատարակվում է 1993 թ. փետրվարից



ՎԱՐՊԳԵՍ ՍՈՒՐԵՆՅԱՆԻ - 150

2010-ին լրանում է հայ մեծանուն նկարիչ Վարդգես Սուրենյանցի 150-ամյակը, և տարին հազեցած է սուրենյանցական գույներով: Գործերից մեկը Վարդգես Սուրենյանցի կողմից ստեղծված «Մի քանի նկարիչներ»-ի մեկը: Ինչպես գեղանկար, այնպես էլ գրաֆիկական երկերի միջև: Գրաֆիկական աշխատանքների շարքում սույն թվականի նոյեմբերի 16-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում կայացավ գիտաժողով: Ինչը գեղարվեստագետներին նախորդեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Աղասյանի բացման խոսքը:



ՄԵԾՎՐՈՒՄ

(ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՅՈՒՐԻ ՇՈՒՐԵՆՅԱՆԻ 70-ԱՄՅԱԿԸ)

ՀՀ ԳԱԱ նախագահության ընդլայնված նիստը ըստ էության մեծարժան տոնական հանդիսություն էր: Եվ տոնականության, անմիջականության ու ջերմության մեկնարկը տվեց ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը: Նա հայտարարեց, որ նախագահության նիստը հրավիրված է լավ առիթով, «որովհետև նշում ենք մեր լավ ընկերոջ՝ Յուրի Շուրենյանցի ծննդյան 70-ամյակը»:

Մենք բարձր տրամադրությամբ մեր սրտի բարի, ջերմ խոսքը պետք է ուղղենք նրան, որովհետև Յուրի Շուրենյանցի լիովին վաստակել և հիրավի արժանի է դրան: Յուրի Շուրենյանցի իսկական մտավորական է, բարոյական բարձր արժանիքներով օժտված մարդ, հրաշալի ընկեր:

Որպես մեծատաղանդ գիտնական նա մեծ ավանդ ունի Հայաստանում ինֆորմացիոն կոմպյուտերային գիտական և կրթական ցանցի ստեղծման, զարգացման և եվրոպական ակադեմիական կառույցների հետ միացման գործում: Եվ այն տարիներին, երբ Շուրենյանցի աշխատում էր Երևանի հաշվիչ մեքենաների ինստիտուտում և Խորհրդային Միությունում առաջին հաշվիչ մեքենաների ստեղծողներից էր, և այն ժամանակ, երբ ղեկավարում էր ինֆորմացիայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտը, Յուրի Շուրենյանցի հսկայական ավանդ ունեցավ Հայաստանում ինֆորմացիոն տեխնոլոգիաների զարգացման, ինֆորմացիոն ցանցի ստեղծման գործում:

Ես կարծում եմ, որ այսօրվա մեր ելույթ ունեցողները ըստ արժանվույն կզմանա նրա մեծ ավանդը, իսկ ես, ավարտելով խոսքս, մաղթում եմ հորեյարին քաջ առողջություն, երջանկություն, ստեղծագործական նոր նվաճումներ:

Ակադեմիկոս Յուրի Շուրենյանցի մեծարժան հանդիսությանը հորեյարին ողջունեցին ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի տնօրեն Վլադիմիր Սահակյանը, Երևանի պետական համալսարանի պրոռեկտոր, ԳԱԱ թղթակից անդամ Գեղամ Գևորգյանը, Երևանի պետական ճարտարագիտական համալսարանի պրոռեկտոր Ռուբեն Աղասյանը, ազգային համալսարանի ղեկավար, հայ-ռուսական սլավոնական համալսարանի նախագահ, ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանը, Սինոպսիս ընկերության ներկայացուցիչ Վազգեն Մելիքյանը, կապի միջոցների գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն Միլեն Մարկոսյանը, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Սամվել Շուրենյանցի և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանը, Սինոպսիս ընկերության ներկայացուցիչ Վազգեն Մելիքյանը, կապի միջոցների գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն Միլեն Մարկոսյանը, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Սամվել Շուրենյանցի:

Հանդիսությունն ամփոփեց ՀՀ ԳԱԱ մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Նորայր Առաքելյանը: Բոլոր ելույթ ունեցողները իրենց շնորհավորանքի ջերմ և սրտառու խոսքում արժևորեցին Յուրի Շուրենյանցի գիտական մեծ վաստակը, մարդուն, ընկերոջը, նրա բարոյական բարձր արժանիքները: Ողջունյի խոսքերի հանրագումարում մի տեսակ ամբողջացավ Յուրի Շուրենյանցի կերպարը՝ ակնավոր գիտնական, նորարար, գիտության տաղանդավոր կազմակերպիչ, մանկավարժ, հայրենասեր և հայ, հրաշալի մարդ և ընկեր:

Ակադեմիկոս Յուրի Շուրենյանցի 70-ամյակի առթիվ Երևանի պետական համալսարանի, Երևանի պետական ճարտարագիտական համալսարանի, ազգային համալսարանի և հայ-ռուսական սլավոնական համալսարանի ղեկավարներին որոշմամբ հորեյարը պարգևատրվեց Ռուկոն հուշամեդալներով: Հորեյարյանական հանդիսության ժամանակ ընթերցվեցին տարբեր երկրների գիտական կենտրոններից և կազմակերպություններից ստացված շնորհավորական հեռագրեր և ուղերձներ: Ընթերցողին ենք ներկայացնում դրանցից մի քանիսը, անշուշտ՝ կրճատումներով:

(Կարդացե՛ք՝ 2-րդ էջում)

Ռոսսոյի նահանգապետ Վասիլի Գոլուբևը պարգևատրվեց ՀՀ ԳԱԱ ոսկե մեդալով

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան ոսկե մեդալով պարգևատրեց Ռոստոմի նահանգի նահանգապետ Վասիլի Գոլուբևին՝ ՌԴ-ի Ռոստոմի նահանգի և Հայաստանի Հանրապետության միջև գիտության ոլորտում համագործակցության ամրապնդման գործում ունեցած ներդրման համար:

Պարգևատրման հանդիսավոր արարողությունը, ինչպես նաև գիտական համագործակցության հեռանկարային ուղղությամբ ընդհանրապես տեղի ունեցավ ս.թ. նոյեմբերի 10-ին՝ ՀՀ ԳԱԱ նախագահության ընդլայնված նիստում:

«Մենք ուրախ ենք, որ Ռոստոմի նահանգի ղեկավարը մեծ հետաքրքրություն է ցուցաբերում գիտական համագործակցության նկատմամբ, և դա հույս է ներշնչում, որ նոր ծրագրերի իրականացման համար լավ հիմքեր են դրվել», - իր ելույթում նշեց ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը:

Ռոստոմի նահանգապետ Վասիլի Գոլուբևը ընդգծեց, որ Ռոստոմի նահանգում հայկական համայնքն ունի 230 տարվա պատմություն: Այսօր նահանգում ապրում է 200 հազար հայ, հայոց լեզու է դասավանդվում 7 դպրոցներում: «Պետք է պահպանել մեր համագործակցության դիմադրական, կրթության և գիտության ոլորտում արագացնել ինտեգրացիոնը», - ասաց Վասիլի Գոլուբևը:

ՀՀ ԳԱԱ-ն և Ռոստոմի նահանգի Հարավային գիտական կենտրոնը (Ռոստոմի նահանգ) գիտական համագործակցության կազմակերպիչ են կնքել 2004 թ.: Հայկական կողմից համագործակցության մեջ ակտիվ ներգրավված են ՀՀ ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտը, մեխանիկայի ինստիտուտը, կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնը, ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտը:

ՀՀ ԳԱԱ Տեղեկատվական-վերլուծական կենտրոն

Գիտաժողովի առաջին բանախոս ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող Արթուր Ավագյանն անդրադարձավ Վ.Սուրենյանցի և Սամկո Պետերբուրգի «Мир искусства» գեղարվեստական միավորման առաջնություններին՝ զուգահեռներ անցկացնելով հայ նկարչի և «միրիսկուսների» ինչպես գեղանկար, այնպես էլ գրաֆիկական երկերի միջև: Հայաստանի ազգային պատկերասրահի գիտաշխատող Վիկտորյա Բադալյանը ներկայացրեց պատկերասրահում պատկեր նկարչի գրաֆիկայի ուսումնասիրությունը:

Վ.Սուրենյանցի թողած հարուստ տեսական ժառանգությունը գեղագիտական տեսանկյունից քննեց փիլիսոփայական գիտությունների դոկտոր Յակով Խաչիկյանը:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտաշխատող Գարեգին Քոթանջյանի գեղարվեստական առաջնքը Սուրենյանցի գեղանկարչական լեզվի զարգացումն էր:

Արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Աղասյանը խոսեց Սուրենյանցի մի անհայտ կտավի մասին: Համեմատելով նկարչի կորսված նկարների մասին մամուլում պահպանված, սակայն Սուրենյանցի կենսագրության քննարկում ներկայացրեց նկարչի նկարագրություններ՝ Ա.Աղասյանը եզրակացնում է, որ այդ երկուն էլ վերաբերում են արվեստագետի միևնույն մեծադիր կտավին:

«Ճարտարապետությունը Սուրենյանցի ստեղծագործական ժառանգության մեջ» բանախոսության մեջ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր Դավիթ Քերթնեջյանը ներկայացրեց նկարչի՝ ճարտարապետության բեմաներով հողվածները՝ հատկապես բարձր գնահատելով էջմիածնի վերականգնման խնդիրների արժանությունը՝ որպես հայկական ռեստավրացիոն պրակտիկայի առաջին քայլերից:

Վ. Սուրենյանցին նվիրված գրքի հեղինակ, Գևորգ Գևորգյանի (Ջոտտո) թանգարանի տնօրեն Մարտին Միքայելյանը խոսեց Սուրենյանցի՝ տարբեր ուղղությունների, ոճերի մեջ համակրությունների, կողմնորոշումների մասին: Հատկապես ժամանակաշրջանի գեղանկարչների համեմատությանը շեշտվեց Սուրենյանցի մեծ ծիզն ու թիչքը ակադեմիական ուղղություններից դուրս գալու, ժամանակի արվեստի լեզվի բարձր մակարդակով արտահայտվելու համար:

Հայաստանի ազգային պատկերասրահում և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում պատկեր Սուրենյանցի՝ Քրիստոսին նվիրված վեց ստեղծագործություններին անդրադարձավ Երևանի պետական համալսարանի դասախոս Սաթենիկ Վարդանյանը՝ նշելով, որ սուրենյանցական սրբապատկերները նոր խոսք էին հայ հոգևոր միջավայրում:

Գիտաժողովը եզրափակեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի փոխտնօրեն, արվեստագիտության դոկտոր Աննա Ասատրյանը «Երաժշտական անդրադարձները Սուրենյանցի նամակներում» թեմայով գեղարվեստական մեջ: Բացահայտվեցին նկարչի և ակնավոր հայ կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարյանի բարեկամական սերտ կապերը, որոնք հանգեցնում էին ստեղծագործական նոր ձեռքբերումների:

Արդյունքների ամփոփման ժամանակ Ա. Աղասյանը կարևորեց գեղարվեստի բազմաբովանդակությունն ու նորանոր փաստերի վերհանումը: Այսպես, տարբեր տեսանկյուններից անդրադառնալով Սուրենյանցի ստեղծագործողին բանախոսները հիրավի սպառիչ կերպով ներկայացրեցին նկարչի անչափ լեցուն գեղարվեստական ժառանգությունը:

ՄԱՆԵ ՄԿՐՏՅԱՆ


ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի կրտսեր գիտաշխատող

Լրացավ ակաճավոր հայ գիտնական, ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի բնագավառի անվանի մասնագետ և կազմակերպիչ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Յուրի Յայկի Շուբուրյանի ծննդյան 70-ամյակը:

Յուրի Շուբուրյանը ծնվել է 1940 թվի նոյեմբերի 5-ին Երևանում: Ավարտելով Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը (1963 թ.) հաշվողական-լուծող գործիքների և սարքավորումների մասնագիտությամբ՝ նա իր ասպիրանտական ուսումնառությանը շարունակել է Կիևում (ղեկավար՝ Ա.Ա. Լետիչևսկի, այժմ ակադեմիկոս), ավտոմատների հանրահաշվական տեսության նշանավոր դպրոցում, որը զլխավորում էր ակադեմիկոս Վ.Մ. Գլուշկովը: Այստեղ Յու. Շուբուրյանը տեսական խորը գիտելիքների հետ միասին ձեռք է բերում դրանք գործնականում կիրառելու անհրա-

դը եՄ 1045 և եՄ 1046, ԱՄԻՐԻ բարդ էՀԱ-ների և նրանց վրա հենված հաշվողական համակարգերի ստեղծման գործում: Դեկավարելով ծրագրավորողների մի մեծ կոլեկտիվ և ծանրաբեռնված լինելով առօրյա գործնական խնդիրներով՝ նա ժամանակ է գտնում շարունակելու իր հետազոտությունները տեսական ինֆորմատիկայի բնագավառում՝ ստեղծելով միկրոծրագրային ալգորիթմների օպտիմիզացման յուրահատուկ (ապացիկային տրոհման) մեթոդ, մշակում նոր մոտեցումներ ավտոմատների տեսության և դիսկրետ վերափոխիչների ալգորիթմական խնդիրների լուծման ուղղությամբ: Այդ տեսական և կիրառական բնույթի հետազոտություններն ամփոփված են Յուրի Շուբուրյանի դոկտորական թեզում, որի պաշտպանությունը կայացավ 1982 թ. Կիևում:

Յուրի Շուբուրյանը 1986-2006 թ.թ. դե-



ԳԱԱ թղթակից անդամ, իսկ 1996 թվին՝ իսկական անդամ (ակադեմիկոս): 1994-2006 թվերին նա ՀՀ ԳԱԱ ֆիզիկամաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարն էր, իսկ 1995 թվից մինչև այժմ՝ ՀՀ ԳԱԱ փոխնախագահ: Այդ պատասխանատու պաշտոններում Յուրի Շուբուրյանն օգտագործել է իր հարուստ գիտակազմակերպչական փորձն ի նպաստ իրեն վստահված գիտական ուղղությունների զարգացման, ակադեմիկական համակարգի բարեփոխման և արդիականացման, հանրապետությունում կիրառական բնույթի հետազոտությունների խրախուսման և ծավալման, երիտասարդ շնորհալի մասնագետներով ակադեմիկական համակարգի համալրման: Նրա անձնական ղեկավարությամբ պաշտպանվել է շուրջ երկու տասնյակ թեկնածուական թեզ: Հայաստանի կառավարությունը բարձր է գնահատել Յուրի Շուբուրյանի երկարամյա գիտական և գիտակազմակերպչական գործունեությունը՝ շնորհելով նրան սուրբ Մեսրոպ Մաշտոց և Պատվո նշան շքանշանները:

70-ամյա հորեյանը Յուրի Յայկի Շուբուրյանը դիմավորում է ֆիզիկական և մտավոր կարողությունների հասունության շրջանում: Ցանկանանք նրան քաջ առողջություն, երկար տարիների բեղմնավոր կյանք և անձնական երջանկություն իր հարգատների և մտերիմների հետ միասին:

Ռ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ն. ԱՌԱԶԵԼՅԱՆ

ՀԱ ԳԱԱ մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար

ՀԱՅ ԱԿԱՆԱՎՈՐ ԳԻՏՆԱԿԱՆԸ

Ժեշտ ծիրք և փորձ, որոնք ամփոփվեցին նրա թեկնածուական թեզում (1968 թ.) և օգտակար եղան ՀԳԱ հաշվողական կենտրոնում նրա հետագա աշխատանքում:

1971 թվից Յուրի Շուբուրյանը աշխատանքի է անցնում Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտում որպես էՀԱ-ների նախագծման ավտոմատացման գծով ղեկավար մասնագետ: Նրա ղեկավարությամբ և անձնական մասնակցությամբ ինստիտուտում ստեղծվում են ծրագրային համալիրներ էՀԱ-ների միկրոծրագրային կառուցվածքների ավտոմատ սինթեզման համար, որն ավտոմատ նախագծման կարևորագույն բաղադրիչ համակարգ է: Մեծ է նրա ավան-

կավարել է ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտը (սկզբում՝ «ՀՀ ԳԱ հաշվողական կենտրոն» անվանումով): 90-ական թվականների տնտեսական ծանր տարիներին նրան հաջողվեց ոչ միայն պահպանել ինստիտուտի գիտական ներուժը, այլև զարգացնել նոր հեռանկարային կիրառական բնույթի ուղղություններ: Ստեղծվեց Հայաստանի ակադեմիկական համակարգչային ցանցը, մշակվեցին և կատարելագործվեցին ՀՀ ԳԱԱ 30-ից ավելի ինստիտուտներ ընդգրկող ցանցի ծրագրային ապահովման համակարգերը: Մեծ է Յուրի Շուբուրյանի ավանդը Հայաստանի տեղեկատվական համակարգչային գիտակրթական ցանցի

ստեղծման, զարգացման և եվրոպական ակադեմիկական կառուցվածքների հետ միացման գործում: Նրա ակտիվ մասնակցությամբ Հայաստանում ստեղծվեց հայկական հաշվողական գրիդ-ինֆրակառուցվածքը, և արդեն սկսվել է գիտական հաշվողական տեխնոլոգիաների ներդրումը Հայաստանի տնտեսության մեջ: Նրա ջանքերի շնորհիվ պահպանվեցին և նոր զարգացում ստացան նաև ՀՀ ԳԱԱ միջազգային կապերը ինֆորմատիկայի բնագավառում:

Յուրի Շուբուրյանի ակտիվ և բազմակողմանի գիտակազմակերպչական գործունեությունը ստացավ իր արժանի գնահատականը: 1990 թվին նա ընտրվեց ՀՀ

Ողջույնի հեռագրեր

Ուկրաինայի գիտությունների ազգային ակադեմիայի Վ. Մ. Գլուշկովի անվան կիբեռնետիկայի ինստիտուտի կոլեկտիվի անունից սրտանց շնորհավորում ենք Ձեզ պանծալի հորելյանի առթիվ: Ինֆորմացիայի ոլորտում լինելով նշանավոր մասնագետ, Դուք Ձեր ողջ կյանքը նվիրել եք սիրելի գիտությանը ծառայելուն և հայրենի երկրում շարունակում եք ակտիվ գիտական և կազմակերպական գործունեությունը:

Դուք նշանակալի ավանդ ունեք Հայաստանում տեղեկատվական համակարգչային և գիտական ու կրթական ցանցի ստեղծման այն եվրոպական ակադեմիկական կառույցներին ինտեգրելու գործում: Ձեր ակտիվ մասնակցությամբ կարճ ժամանակամիջոցում Հայաստանում ստեղծվեց հաշվողական ազգային գրիդ-ինֆրակառույցը և սկսվեց գիտատար հաշվողական տեխնոլոգիաների ներդրումը Հայաստանի տնտեսության մեջ:

Մենք ուրախանում ենք Ձեր հաջողություններով և հպարտանում նրանով, որ բարեկամ Հայաստանի ակաճավոր գիտնականը ձևավորվել է ինֆորմատիկայի և կիբեռնետիկայի մեր դպրոցում:

Մաղթում ենք հետագա հաջողություններ, երկար և բեղմնավոր ստեղծագործական կյանք:

Ի. Վ. ՍԵՐԳԻԵՆԿՈ

Ուկրաինայի գիտությունների ակադեմիայի Վ. Մ. Գլուշկովի անվան կիբեռնետիկայի ինստիտուտի տնօրեն, Ուկրաինայի ԳԱԱ ակադեմիկոս Ա.Ա. ԼԵՏԻՉԵՎՍԿԻ թվային ավտոմատների տեսության բաժնի վարիչ, Ուկրաինայի ԳԱԱ ակադեմիկոս

Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի սիստեմային ծրագրավորման ինստիտուտի կոլեկտիվը սրտանց շնորհավորում է Ձեզ ծննդյան 70-ամյակի կապակցությամբ:

Մենք ճանաչում ենք Ձեզ որպես տաղանդավոր գիտնականի, ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի բնագավառի խոշոր մասնագետի:

Ձեր մեծ ներդրումը ԽՍՀՄ-ում հաշվիչ մեքենաների և համակարգերի ստեղծման գործում բարձր է գնահատվել գիտական և արտադրական հանրությունների կողմից:

Գիտնականի Ձեր կոչումը, նորը տեսնելու Ձեր կարողությունը, տեսական խորը մշակումը գործնական կարևորագույն խնդիրների հետ արդյունավետ մեկտեղելու հմտությունը հնարավորություն են ընձեռում Ձեզ հաջողությամբ իրականացնել առաջնային գիտական հետազոտություններ և ազգային խոշորագույն նախագծեր:

Դուք ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի ժամանակակից խնդիրների իրականացման ճանաչված առաջամարտիկն եք և ղեկավարը:

Ձեր եռանդուն հոգածությունը և Ձեր ստեղծագործ մասնակցությունը անգնահատելի ներդրում են մեր երկրների գիտական արդյունավետ համագործակցության ոլորտում:

Դուք Ձեզ դրսևորեցիք որպես հիանալի կազմակերպիչ՝ Հայաստանում գիտական և կրթական տեղեկատվական համակարգչային ցանցի ստեղծման և զարգացման գործում:

Ամբողջ հոգով, թանկագին Յուրի Յայկի, ցանկանում ենք Ձեզ քաջ առողջություն, ստեղծագործական մեծ հաջողություններ և անձնական երջանկություն:

Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի սիստեմային ծրագրավորման ինստիտուտի կոլեկտիվի անունից՝ Ռ.Գ.Ա ակադեմիկոս Վ. Պ. ԻՎԱՆՆԻԿՈՎ

Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի հաշվողական կենտրոնի կոլեկտիվը շնորհավորում է Ձեզ նշանակալի տարեթվի՝ ծննդյան 70-ամյակի առթիվ:

Մեծ ճանաչում և համբավ են ստացել Ձեր գիտական աշխատանքները ավտոմատների մաթեմատիկական տեսության, էՀԱ-ների նախագծման ոլորտում, ինչպես նաև հաշվողական բարձր արտադրողականության համակարգերի ստեղծման և ներդրման գործում:

Ձեր ղեկավարությամբ լուծված են բազմաթիվ կիրառական խնդիրներ, որոնք կապված են ինֆորմացիոն տեխնոլոգիաների զարգացման և դրանց ներդրմանը այնպիսի բնագավառներում, ինչպիսիք են երկրաբանությունը, կենսաբանությունը, կրիտիկական ինֆրաստրուկտուրաների կազմակերպումն ու անվտանգությունը:

Լինելով ակաճավոր գիտնական և մի շարք գիտական ուղղությունների հեղինակ, Դուք միշտ մեծ ջանք ու ուշադրություն եք նվիրել մանկավարժական, հասարակական և գիտակազմակերպչական գործունեությանը:

Ձեր հորեյանի օրը, թանկագին Յուրի Յայկի, մաղթում ենք Ձեզ ամուր առողջություն, երջանկություն, բարեկեցություն, ստեղծագործական նոր հաջողություններ և սիրանքներ:

Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի հաստատության Ռ.Գ.Ա Ա. Ա. Գորոդնիցինայի անվան հաշվողական կենտրոնի տնօրենի տեղակալ Յու. Ի. ԺՈՒՐԱՎԼՅՈՎ Ռ.Գ.Ա ակադեմիկոս

Հուշարձան փառապանծ պորավարին



Նորությունը այն մասին, որ արևմտահայ ազգային-ազատագրական պայքարի ռաիվիրա, մեծանուն զորավար Անդրանիկ Օզանյանի հուշարձանը տեղադրվելու է Սոչի քաղաքի Լազարևսկայա շրջանում, մեծ արձազանք է գրել թուրքական լրատվամիջոցներում:

Ինչպես պարզվում է, Թուրքիայում անհանգստացած են այն փաստով, որ բարեկամ Ռուսաստանում պետք է կանգնեցվի հայ զորավարի հուշարձանը, մարդու, որը անհաշիվ փորձանքներ է բերել թուրքերի գլխին: Թուրքական գրեթե բոլոր լրատվամիջոցները անդրադարձել են այս թեմային, հիշեցնելով, որ զորավար Անդրանիկը Առաջին համաշխարհային տարիներին ոչնչացրել է հազարավոր թուրքերի:

Ինչպես հաղորդել է NEWS.am-ը, զորավար Անդրանիկի հուշարձանը պետք է տեղադրվի Մեծ Սոչիի Լազարևսկայա շրջանում: Հուշարձանի տեղադրման գաղափարի հեղինակը Լազարևսկայա շրջանի հայ համայնքի մտահղացումն է, որոնց մեծամասնությունը սերունդն է մարդկանց, որոնք եղեռնի տարիներին փրկվել են գեներալ Անդանիկի քաջարի զինվորների կողմից:

Հուշարձանի հեղինակը Հայաստանի ժողովրդական նկարիչ, քանդակագործ Մարատ Մինասյանն է: Հուշարձանն ունենալու է 4 մետր բարձրություն և կշռելու է մի քանի տոննա:



ՀՀ ԳԱՍ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ


Ներկայացնում է ՀՀ ԳԱՍ սփյուռքի բաժինը

Վեհարի Սաքանյան

ՀՀ ԳԱՍ արտասահմանյան անդամ, պրոֆեսոր Վեհարի Սաքանյանը ծնվել է 1950 թ. հոկտեմբերի 28-ին Հայաստանի Հանրապետության Ստեփանավան քաղաքում: Հայրը լրագրող էր, «Փարոս» թերթի գլխավոր խմբագիրը, իսկ մայրը՝ բուժաշխատող: Վ. Սաքանյանը դպրոցում ուսանելու տարիներին մասնակցել է ֆիզիկայի և մաթեմատիկայի օլիմպիադաներին: Դպրոցը ոսկե մեդալով ավարտելուց հետո մեկնել է Մոսկվա՝ ուսումը շարունակելու: Այդ ժամանակ Վ. Սաքանյանի հայրը՝ Արտավազը Սաքանյանը ուսանում էր Մոսկվայի բարձրագույն կուսակցական դպրոցի լրագրության (ժուռնալիստիկա) բաժնում: Հակում ունենալով ֆիզիկա և մաթեմատիկա առարկաների նկատմամբ Վ. Սաքանյանը սկզբում ընդունվել է Մոսկվայի Լոմոնոսովի անվան համալսարանի մաթեմատիկայի ֆակուլտետ: Սակայն մոր մեծ ցանկությունն էր, որ իր երեք երեխաներն էլ ընտրեն բժշկի մասնագիտությունը: Այդ պատճառով էլ նույն տարում Վ. Սաքանյանը ընդունվում է նաև Մոսկվայի II բժշկական ինստիտուտի բուժական ֆակուլտետ:

Ուսանելու տարիներին ակտիվ մասնակցել է ինստիտուտի ուսանողական գիտական ընկերության առօրյային և դարձել 1972 և 1974 թթ. կազմակերպված գիտաժողովների մրցանակակիր՝ հատկապես մեծ հետաքրքրություն ցուցաբերելով գենետիկա և մանրէաբանություն առարկաների նկատմամբ: Դա էր պատճառը, որ ինստիտուտը ավարտելուց անմիջապես հետո նա ընդունվել է Մոսկվայի արդյունաբերական մանրէների գենետիկայի և սելեկցիայի ինստիտուտի ասպիրանտուրա (մոլեկուլային գենետիկայի լաբորատորիա) ուսանելով մեծ գիտնական Սոս Ալիխանյանի մոտ, որն, ի դեպ, այդ ինստիտուտի տնօրենն էր: Թեկնածուական թեզի պաշտպանությունից հետո Վ. Սաքանյանը մեկնել է Գոնգարիա՝ UNESCO-ի միջազգային կենսաբանական կենտրոնում մասնագիտական որակավորման բարձրացման նպատակով:

1982 թ. ամինաթթուների գիտահետազոտական տեխնոլոգիական ինստիտուտի տնօրեն Էդուարդ Հակոբյանի խնդրանքով և Սոս Ալիխանյանի առաջարկությամբ Վեհարի Սաքանյանը եկել է Երևան և կենսատեխնոլոգիայի գիտահետազոտական ինստիտուտում հիմնել գենային ին-



ժենետիկայի լաբորատորիա: Հիմնելով այդ լաբորատորիան, իր իսկ պատրաստած կադրերի հետ միասին Վ. Սաքանյանը առաջինը նախկին ԽՍՀՄ-ում ծեռնամուխ եղավ ստանալու մի շարք ամինաթթուների և ֆերմենտների բարձրակարգ արտադրության արտադրիչներ, որոնք մինչ այժմ էլ մրցունակ են միջազգային շուկայում:

Մոսկվայում 1987 թ. արդյունաբերական մանրէների գենետիկայի և սելեկցիայի ինստիտուտում Վ. Սաքանյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: Ներկայումս Վ. Սաքանյանը զբաղվում է սպիտակուցների և հակամարմինների փոքրագույն մոլեկուլների ուսումնասիրության չիպային տեխնոլոգիայի մշակմամբ, որը հնարավորություն կտա ստեղծելու նոր հակաբազիլային գործոններ (կաթնագեղձի քաղցկեղ): Այս մշակումները բավական խոստումնալից են՝ կլինիկական փորձարկումների անցնելու համար:

Քույրերը՝ Արմինե և Կարինե Սաքանյանները, մասնագիտությամբ բժիշկներ են: Նրանց երեխաները ընտրել են պապիկի՝ լրագրողի մասնագիտությունը: Կինը՝ Պողոշինա Սաքանյան Իրինան զբաղվում է խեցեգործությամբ: Որդին՝ Արտակ Սաքանյանը, զբաղվում է նկարչությամբ և ունեցել է մի շարք ցուցահանդեսներ: Կինը և որդին Ֆրանսիայում բացել են զեղակերստի սրահ, որտեղ ցուցադրում են խեցեգործական աշխատանքներ և նկարներ, որոնցում արտացոլված է հայկական մշակույթը: Աղջիկը՝ Աննա Սաքանյանը, ունի ֆիզիկամաթեմատիկական հակումներ և այժմ սովորում է Փարիզի միջազգային հարաբերությունների ինստիտուտի տնտեսագիտական բաժնում:

Ֆրանսիա մեկնելուց հետո Վ. Սաքանյանը մինչ այժմ համագործակցում է ՀՀ տարբեր ինստիտուտների, հատկապես իրեն հարազատ՝ կենսատեխնոլոգիա ԳՀ ինստիտուտի գիտնականների և գիտական խմբերի հետ:

Սկսած 1995 թ. պրոֆ. Վ. Սաքանյանը սեմինարներ և դասախոսություններ է անցկացրել կենսատեխնոլոգիա ԳՀ ինստիտուտում, ԵՊՀ-ում և ԳԱՍ կենսաքիմիայի ինստիտուտում, որտեղ ներկայացրել է կենսատեխնոլոգիայի ժամանակակից նվաճումները: Ֆրանսիայում գտնվելու ժամանակ էլ Վ. Սաքանյանի ղեկավարությամբ հայ երիտասարդներից 5-ը պաշտպանել են թեկնածուական թեզեր: Պրոֆ. Վ. Սաքանյանի աջակցությամբ Նանտի համալսարանի կենսատեխնոլոգիայի լաբորատորիայում վերապատրաստվել են Հայաստանի մի շարք գիտաշխատողներ և ասպիրանտներ:

Պրոֆ. Վ. Սաքանյանի նախաձեռնությամբ 2000 թ. կատարվել է համատեղ աշխատանք կենսատեխնոլոգիա ԳՀ ինստիտուտի, Նանտի համալսարանի կենսատեխնոլոգիայի լաբորատորիայի և Ajinomoto Co. LTD-ի միջև, որի արդյունքում ծեռք է բերվել համատեղ արտոնագիր: Միաժամանակ այդ աշխատանքը ֆինանսավորվել է Ajinomoto Co. LTD-ի կողմից, որը ֆինանսական աջակցություն էր կենսատեխնոլոգիա ԳՀ ինստիտուտի և աշխատակիցների համար:

Հայաստանում պրոֆեսոր Վ. Սաքանյանի ղեկավարած խմբի կողմից ստացվել է բարձրակարգ շտամ-արտադրիչ, որի հիման վրա կազմակերպվել է լիզին ամինաթթվի բավականին արդյունավետ արտադրություն: Ներկայումս նա օգնում է կենսատեխնոլոգիայի ԳՀ ինստիտուտի աշխատակիցներին կորիներՖորմ մանրէների հիման վրա գենային ինժեներիայի եղանակներով ստանալ ամինաթթուների նոր շտամ-արտադրիչներ, որոնք կարող են օգտագործվել արտադրության մեջ:

Պրոֆ. Վեհարի Սաքանյանը աջակցել է և շարունակում է իր օգնությունը կենսատեխնոլոգիա ԳՀ ինստիտուտի շատ աշխատակիցների՝ նրանց տրամադրելով գենախմբերային աշխատանքների համար անհրաժեշտ քանակաբաժնի նյութեր:

Այսօր էլ նա ակտիվորեն համագործակցում է Հայաստանի առողջապահական համակարգի արդիականացման և նոր տեխնոլոգիաների ներդրման ոլորտում:

ՀՀ ԳԱՍ բարձր գնահատելով Վեհարի Սաքանյանի գիտական վաստակը, ինչպես նաև Հայաստանի հետ սերտ համագործակցությունը, 2008թ. նրան ընտրեց ՀՀ ԳԱՍ արտասահմանյան անդամ:

Օրերս լրացավ մշանավոր կենսատեխնոլոգ, Նանտի համալսարանի պրոֆեսոր, ՀՀ ԳԱՍ արտասահմանյան անդամ Վեհարի Սաքանյանի 60-ամյակը, որի առթիվ ջերմորեն և սրտանց շնորհավորում ենք նրան, ցանկանում քաջ առողջություն, երջանկություն և նորանոր հաջողություններ գիտական գործունեության ասպարեզում:

Իրալացի լեռնագնացը փաստում է Նոյյան փապանի գոյությունը

Մարսի վրա 20 փարի հեպո մարդիկ կապրեն


Իտալացի լեռնագնացը, ով արդեն մի քանի տարի հանրությանը ներկայանում է որպես Ազատ Վարդանյան անվամբ, Արարատ լեռան գագաթին շուրջ քսան տարվա ուսումնասիրությունների արդյունքում Նոյյան տապանի գոյությունը հավաստող բազմաթիվ մասուկներ է հայտնաբերել: Թուրքական հետապնդումներից խուսափելու և պեղումները Արարատի գագաթին շարունակելու համար նա լրատվամիջոցներում չի հրապարակում իր իսկական անուն-ազգանունը: Իտալացի լեռնագնացը այժմ Հայաստանում է ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտի և Մշակույթի հայկական ֆոնդի հրավերով:

«Չնայած առաջին անգամ են Հայաստանում, բայց իմ սիրտը վաղուց ձեր երկրում է: Ես Արարատի փեշին են «ծերացել»: Արարատ լեռը, Նոյյան տապանի մնացորդները ուսումնասիրելու հնարավորություն ունենալու համար ստիպված եմ եղել հազար ու մի ձևերով խաբել թուրքերին»,- «Արմենպրեսի» թղթակցի հետ զրույցում ասաց նա:

Թուրքիայի տարածքում իր գործունեության իրական նպատակները թաքցնելու համար իտալացին ոչխարի հոտ է զնել և Արարատի փեշերին մի քուրդ ընտանիքի հետ զբաղվում է ոչխարաբուծությամբ: Շուրջ քսան տարի առաջ հենց քրդերն են նրան օգնել հասկանալու, թե 20-րդ դարի սկզբին ինչ է կատարվել Արարատի փեշերին: Հայկական արմատներ ունեցող մի քուրդ երիտասարդ պատմել է նրան, թե ինչու են ամեն քայլափոխի մարդկային ոսկորներ ու ավերակներ հանդիպում իրենց: Եվ իտալացի լեռնագնացը, ով սկզբում մեկ նպատակ ուներ միայն Արարատ լեռը մազլցել ու աստվածաշնչյան Նոյյան տապանի հետքերով գնալ, սկսել է ուսումնասիրել նաև հայոց ջարդերի պատմությունը: Սեփական ուսումնասիրությունների վրա հիմնվելով՝ նա այսօր պնդում է, որ եղեռնի օրերին մոտ 200 հազար հայ է սպանվել Արարատի փեշերին: «Թուրքերը հաճախ հող են բերում, լցնում այդ ոսկորների վրա, բայց ո-

րոշ ժամանակ անց դրանք նորից գետնի երես են դուրս գալիս: Իսկ թուրքերը ամեն անգամ չեն կարող հասնել այդ բարձունքներին, քանի որ վախ ունեն քրդերից»,- ասում է Ազատ Վարդանյանը:

Լեռնագնացը Արարատի գագաթին փայտի կտոր է հայտնաբերել 4500 մետր բարձրության վրա: Նրա խոսքով՝ առաջին անգամ է առհասարակ նման բարձրության վրա փայտ հայտնաբերվում, դրա վրա կան կուպրի հետքեր: Ա. Վարդանյանը քարտեզագրել է Արարատի փեշերին եղած հայկական գյուղերի ավերակները և այն վայրը, որտեղ, ըստ իր ապացույցների, հանգրվանել էր Նոյյան տապանը: Իր գտածոները իտալացի լեռնագնացը տեղափոխելու է Վենետիկի Սուրբ Ղազար կղզու Մխիթարյան միաբանություն, որտեղ ստեղծվել են համապատասխան պայմաններ դրանք անվնաս պահելու համար: Այնուհետև հայկական մշակույթին և Նոյյան տապանին նվիրված ցուցահանդեսներ են կազմակերպվելու նախ իտալական քաղաքներում, ապա Եվրոպայում:



20 տարի հետո Մարսի վրա կհայտնվեն երկրացիների առաջին գաղութները: Այդպես են կարծում Էյմսի անվան հետազոտական կենտրոնի (ԱՄՆ) գիտնականները: NASA-ի հովանու ներքո նրանք մշակում են «Հարյուրամյա տիեզերանավ» նախագիծը: Ծրագրվում է Մարսի վրա կամավոր աստղագնացների առաջին խումբը իջեցնել արդեն 2030-ին: Այդ մասին հաղորդում է Աստիտեթոլ պրես գործակալությունը:

«Այդ նախագնացները ոչ միայն կբնակեցնեն մոլորակը, այլև կսկսեն փոխակերպել այն: Գլխավոր խնդիրն է Մարսի մթնոլորտում կուտակել մարդկանց կյանքի համար անհրաժեշտ գազեր: Դրանք կարելի է կուտակել ցածրավայրերում և կիրճերում, որտեղ կբնակվեն առաջին մարսեցիները: Աստիճանաբար մոլորակի վրա ի հայտ կգան երկրայինը հիշեցնող մթնոլորտ և կլիմա», պատմում է նախագծի հեղինակ, պրոֆեսոր Յովարդ Մակքերդին:

Գիտնականները պետք է լուծեն ինչպես տեխնիկական, այնպես էլ ֆինանսական բարդ խնդիրներ:

«Մարսի բնակիչները պետք է սինթեզեն թթվածին և էլեկտրականություն, ստանան սննդամթերք: Նրանք այլևս չեն վերադառնա երկիր: Դա թույլ կտա զգալիորեն կրճատել ծախսերը», պարզաբանում է Մակքերդին:

Առաքելության նվազագույն արժեքը 10 մլրդ դոլար է: ԱՄՆ իշխանությունները հետազոտություններին հատկացնում են գումարի միայն փոքր մասնաբաժիններ: Ուստի գիտնականները կղիմեն նաև մասնավոր ներդրողներին:

Լրացավ կենդանաբանության ինստիտուտի առաջին տնօրեն, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ակադեմիկոս միջատաբան Մարգարիտա Երվանդի Տեր-Մինասյանի ծննդյան 100-ամյակը:

Մ.Ե.Տեր-Մինասյանը ծնվել է 1910 թվականին Լայպցիգում, որտեղ կրթություն էր ստանում հայրը՝ նշանավոր բանասեր, պատմաբան, բառարանագիր Երվանդ Տեր-Մինասյանը:

1926թ. ընդունվել է 1930-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի բնագիտական

ինստիտուտի հայաստանյան բաժանմունքում (Արմֆան): Այստեղ լիովին դրսևորվում են Տեր-Մինասյանի կազմակերպչական մեծ ունակությունները: Աշխատանքային գործունեությունը սկսելով գիտաբարոյաբան, ապա կենդանաբանության բաժանմունքի վարիչի պաշտոններում 1943թ. Հայաստանում ԳԱ հիմնադրումից հետո, նա նշանակվում է նորաստեղծ կենդանաբանության ինստիտուտի տնօրեն: Այդ պաշտոնում նա աշխատել է մինչև կենդանաբանության և բույսերի պաշտպանության ինստիտուտ-



մանը նա նվիրաբերել է միջատաբանությանը, բզեզաբանությանը (կոլեոպտերոլոգիա): Գիտությանն անմնացորդ նվիրումի արդյունքն են նրա ավելի քան 170 աշխատությունները, որոնք հայտնի են ողջ աշխարհում և տեսական ու գործնական մեծ նշանակություն ունեն: Չորս արժեքավոր մենագրությունները (որոնք թարգմանաբար տպագրվել են Անգլիայում և ԱՄՆ-ում) նվիրված են երկարակնճիթ, ընդակեր, ցողունակեր, կլեոնային բզեզների ընտանիքների կարգաբանությանը, կենսաբանությանը, աշխարհագրական տարածվածությանը և տնտեսական նշանակությանը: Հեղինակի կողմից նկարագրվել են ավելի քան 150 նոր բզեզների տեսակներ:

Չափազանց ընդարձակ և բազմակողմանի է եղել նրա մասնակցությունը գիտա-կազմակերպչական և հասարակական աշխատանքներին: Երկար տարիներ հանդիսացել է համամիութենական միջատաբանական ընկերության նախագահության և խորհրդի անդամ, ԽՍՀՄ ԳԱ կենդանաբանության ինստիտուտում գործող մասնագիտական խորհրդի անդամ, բեղմնավոր աշխատանք է ծավալել «ԽՍՀՄ ֆաունայի» և «ԽՍՀՄ ֆաունայի որոշիչների» «Միջատաբանական հանդես» ամսագրի խմբագրական խորհուրդներում: Բազմիցս զեկուցումներով հանդես է եկել միջազգային գիտաժողովներում:

Կառավարությունը բարձր է գնահատել Տեր-Մինասյանի գիտամանկավարժական, հասարա-

կական և կազմակերպչական գործունեությունը՝ պարգևատրելով բազմաթիվ մեդալներով ու շքանշաններով:

Մինչև 80-ական թվականների կեսերը նա համախառն էր այցելում Հայաստան, մասնակցում գիտարշավներին, իր հարուստ փորձն ու գիտելիքները փոխանցում երիտասարդներին: Իսկ խոնավ ու ցուրտ Պետերբուրգում նրա հետ շփվող յուրաքանչյուր ոք զգում էր նախնայաց բնօրրանի նկատմամբ տածած իսկական հայաստանցու մեծ սերը:

Բազմափաստակ գիտնականն իր մահկանացուն կնքեց 1995թ. ապրիլի 9-ին:

Այսօր Մ.Տեր-Մինասյանի և Ա.Ռիխտերի գործի արժանի շարունակողն է նրանց ավագ դուստրը՝ Ռ.Գ. ԳԱ կենդանաբանության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, կենսաբանական գիտությունների դոկտոր Վերա Ռիխտերը:

Անխոջ գիտնականը և մեծ ուսուցիչը՝ որպես գիտության իմաստուն սերմնացան, տարիների կուտակած իր փորձն ու իմաստունությունը լիաբերու բաշխել է աշխարհի տարբեր երկրներում աշխատող իր աշակերտներին: Նրա գործի երախտապարտ շարունակողները հիշում են, որ դաստիարակվել են իրենց ուսուցչի անձնական օրինակով լինել բարի, անաչառ, շիտակ, ազնիվ, լավատես, տոկուն...

Ուրվան ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀՀ ԳԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի ԳԿ ավագ գիտաշխատող

Անխոջ գիտնականը և մեծ ուսուցիչը

Մարգարիտա Տեր-Մինասյանի ծննդյան 100-ամյակի առթիվ

Ֆակուլտետը: Ապա ուսումը շարունակել է ԽՍՀՄ ԳԱ կենդանաբանության ինստիտուտի (Լենինգրադ) ասպիրանտուրայում: 1935թ. թեկնածուական ատենախոսության պաշտպանությունից հետո նա վերոհիշյալ ինստիտուտում աշխատելու առաջարկ է ստանում և 3 տարի աշխատում է Ա.Պ.Սեմյոնով-Տյան-Շանսկու դեկավարած լաբորատորիայում:

1938թ. Տեր-Մինասյանը և նրա ամուսինը վաղաժամից տաղանդավոր միջատաբան Անդրեյ Ռիխտերը, իրավիճակում են Երևան և աշխատանքի ընդունվում ԽՍՀՄ ԳԱ կենսաբանության

ների միավորումը (1949թ.) միաժամանակ դասավանդելով ԵՊՀ կենսաբանական ֆակուլտետում:

Հայաստանում աշխատելու տարիներին Մ.Ե.Տեր-Մինասյանը իբրև կոլեկտիվի իսկական հոգածու առաջնորդ, ինստիտուտում ներգրավել է բազմաթիվ շնորհալի երիտասարդների (Հ.Ա.Ավետյան, Գ.Դ.Ավագյան, Ն.Ն.Արամյան, Մ.Ա.Տեր-Գրիգորյան, Կ.Ս.Հախումյան և այլք), որոնք հետագայում մեծ ներդրում ունեցան Հայաստանում կենդանաբանության զարգացման ոլորտում:

1944թ. Տեր-Մինասյանը պաշտպանում է դոկտորական ա-

տենախոսություն «ԽՍՀՄ և հարակից երկրների խողովակաղոր բզեզների ֆաունան» թեմայով: Այս հիմնարար աշխատությունը հետագայում առանձին հատորով տպագրվել է «ԽՍՀՄ ֆաունան» շարքում: 1949թ. նրան շնորհվում է պրոֆեսորի գիտական կոչում:

1950թ. Մ.Ե.Տեր-Մինասյանը կրկին աշխատանքի է անցնում ԽՍՀՄ ԳԱ կենդանաբանության ինստուտում՝ սկզբում գիտաբարոյաբանի, ապա՝ մինչև թոշակի անցնելը, միջատների կարգաբանության լաբորատորիայի ավագ գիտաշխատողի պաշտոններում: Իր արգասավոր կյանքի մեծ

Մեծարգո պարոն պրոֆեսոր.

Ահա արդեն հինգերորդ տարին է, ինչ գիտական շրջանակներում խոսվում է Ձեր կողմից ստեղծված այսպես կոչված «Թթուների և հիմքերի ընդհանրացված տեսության» մասին: Չնայած այն բազմիցս քննարկվել է ոչ միայն Հայաստանի, այլ արտասահմանյան մի քանի մասնագիտական լսարաններում և ստացել իրեն արժանի բացասական գնահատական, Դուք ոչ գիտական մասնակցում հանդես եք գալիս տարբեր գիտական պաշտոնյաների հասցեին միանգամայն անհիմն մեղադրանքներով՝ լավ գիտակցելով հանդերձ, որ նրանք ոչ մի մեղք չունեն ձեր «տեսության» սնանկության մեջ: Հատկապես այս հանգամանքով է պայմանավորված սույն նամակի հրապարակումը:

Դուք շատ լավ տեղյակ եք, որ մոլեկուլում էլեկտրոնային խտության բաշխվածության որոշման Ձեր կողմից առաջարկվող մոտեցումը, որն այդ «տեսության» ատաղձն է, շատ մոտ է իմ դիպլոմային աշխատանքի թեմային, որը ես կատարել եմ Մոսկվայում դեռևս 1976-77 ուսումնական տարում: Այն ժամանակին զեկուցվել է Մոսկվայի մի քանի ինստիտուտներում, այդ թվում ԽՍՀՄ ԳԱ օրգանական քիմիայի և էլենմետոզանական քիմիայի ինստիտուտներում և արժանացել խրախուսանքի (դա կարող են հաստատել նույն դեկավարի մոտ դիպլոմային աշխատանք կատարող, ներկայումս ՀՀ ԳԴԿ նախագահ Ս.Հարությունյանը և, նրա բնորոշմամբ, անվանի քիմիկոս Ս. Ներսիսյանը, որոնք Դուք շատ լավ գիտեք): Սակայն հետագայում այդ խնդիրը դադարեց ինձ հետաքրքրել, քանի որ գիտակցում էի դրա անհեռանկար լինելը: Այնպես որ Ձեր «տեսության» հիմքը հանդիսացող Պոլինգի կողմից առաջ քաշված էլեկտրաբացասականության գաղափարին ես ծանոթ եմ ոչ միայն քիմիայի դպրոցական դասագրքերից: Դուք դա էլ շատ լավ գիտեք:

Իմ նամակի հիմնական շարժառիթը սակայն այդ «տեսության» քննադատությունը չէ (այնտեղ քննադատելու բան էլ չկա, դրա մասին մենք խոսել ենք մեր առանձնագրույցներում): Բանը նրանումն է, որ նոր ուսումնական տարվա հենց առաջին օրերին իմ ուսանողները, կարդալով ոչ գիտական Ձեր բազմաթիվ հոդվածները (որոնց նպատակը թերթերում տպագրված նյութերին դեռևս հավատացող որոշ ընթերցողների մո-


լորության մեջ գցելն է), այնպիսի մեծ հետաքրքրություն են ցուցաբերել Ձեր «տեսության» նկատմամբ, որը կարելի է համեմատել ֆուտբոլային խաղերը գուշակող հայտնի ութոտնուկի նկատմամբ հետաքրքրության հետ: Քանի որ իմ կողմից դասավանդվող առարկաները հիմնականում վերաբերում են մոլեկուլի կառուցվածքին, ապա ստիպված եմ լինում պատասխանելու այդ «տեսությանը» վերաբերող նրանց հարցերին, ծախսելով դասի համար նախատեսված ժամանակի մի մասը, որից, սակայն տուժում է ուսումնական գործընթացը: Այնպես որ նամակս պայմանավորված է նաև մասնագիտական անհրաժեշտությամբ:

Հարգելի Ալեքսանդր Համբարձումի, Ինչպես Դուք եք պնդում, Ձեր մշակած տեսությունը «նոր, աննախադեպ հնարավորություններ է բացում քիմիայի և հատկապես օրգանական քիմիայի զարգացման համար, սակայն չի ընդունվում քիմիկոսների կողմից, քանի որ ակադեմիական որոշ չի-նովիկներ և որոշ «իքի բիր» գիտնականներ դրա դեմ կազմակերպված արշավ են ծավալել»: Ես բախտ եմ ունեցել մի քանի անգամ մասնակցելու այդ «տեսությանը» նվիրված քննարկումներին: Ի հիասթափություն ինձ, դրանք երբեք ըստ էության չեն եղել, իսկ հաճախ էլ վեր են ածվել ամոթալի լեզվակոծիչների, որոնք ուղեկցվել են անձնական վիրավորանքներով: Հիրավի, վեճի մեջ է ծնվում ճշմարտությունը: Սակայն «վիճաբանության» այն ձևաչափը, որը Դուք եք ընտրել, չի կարող բացահայտել որևէ ճշմարտություն: Խոսքս ոչ գիտական մասնակցում Ձեր ունեցած բազմաթիվ ելույթների մասին է, որոնք անառողջ մթնոլորտ են ստեղծում նախ և առաջ քիմիկոսների շուրջը:

Իմ նամակի նպատակը ոչ թե Ձեզ ուսուցանելն է («век живи, век учи!») ասացվածքի երկրորդ մասը Ձեզ չի վերաբերում, այլ բերելու այն փաստարկները, որոնք թույլ են տալիս պնդելու, որ այդ «տեսությունը» լավագույն դեպքում կարող է հավակնել լինելու «մոլեկուլում էլեկտրոնային բաշխվածության գնահատման մի հերթական մոտավոր եղանակ», այն էլ միայն շատ լուրջ և Կա-

կան վերանայումներից (ոչ թե շտկումներից) հետո: Ձեր կողմից առաջարկվող եղանակը իր պարզունակությամբ թվում է թե ներկայումս լայնորեն տարածված եղանակների նկատմամբ որոշակի առավելություններ ունի, սակայն իր պարզամտության հետևանքով այն ի վիճակի չէ փոխարինելու քիմիկոսների կողմից ընդունված և ներկայումս բավական մեծ հաջողությամբ օգտագործվող այլ մոտավոր եղանակներին (իսկապես, ամեն հանճարեղ բան շատ պարզ է, սակայն ամեն պարզ բան հանճարեղ չէ): Դրա հիմնական պատճառն այն է, որ Ձեր առաջարկած մոտեցումը հիմնված է լավագույն դեպքում ատոմի կառուցվածքի Ռեզերֆորդի պարզագույն մոդելի վրա, որն ինչպես հայտնի է յուրաքանչյուր դպրոցականի, իրեն սպառել է դեռևս իր ստեղծողների աշխատանքներից դուրս գալուց անիջապես հետո, թեև այն կարողացել է մեծ հաջողությամբ բացատրել տարրերի պարբերական օրենքը:

Ձեր մոտեցման մեջ հաշվի չեն առնվում ոչ միայն էլեկտրոնային խտության բաշխվածության վրա միջմոլեկուլային փոխազդեցությունների ունեցած ազդեցությունը, այլև սույլ մոլեկուլում իրար հետ «անմիջապես չմիացած» ատոմների միջև փոխազդեցությունները: Ել չենք խոսում այն մասին, թե ինչքանով կարող է կիրառելի լինել Ձեր մոտեցումը ոչ մոլեկուլային կառուցվածքով նյութերի հատկությունների նկարագրման համար: Սակայն Ձեր մոտեցման հիմնական թերությունը թերևս կայանում է նրանում, որ այնտեղ օգտագործվող բոլոր սկզբունքային հասկացությունները (կապի իոնական բնույթի միավոր, ատոմի ակցեպտորային ուժ, ատոմի էլեկտրադոնորային ուժ և այլն) հնարավոր է և զուրկ ֆիզիկական իմաստից: Այդ է պատճառը, որ մոլեկուլի Ձեր առաջարկած մոդելով չեն կարող բացատրվել նրանց բազմաթիվ, այդ թվում կառուցվածքային, սպեկտրաչափական, օպտիկական և այլ հատկությունները: Ընդամենը, եթե Ձեր մոտեցումն, ինչպես Դուք եք պնդում, այնուամենայնիվ հեշտությամբ լուծում է նյութերի ռեակցիոնունակության վերաբերյալ բազմա-



թիվ հարցեր, ապա իհարկե, այն ապրելու իրավունք ունի: Սակայն ապրելու ոչ թե որպես «կուռ, համապարփակ տեսություն», ինչպես Դուք եք այն անվանում, այլ միայն ու միայն որպես խիստ մոտավոր և որևէ քննադատության չդիմացող մի մոտեցում, որը, կներք, ավելի շատ գիտական գրքացություն է հիշեցնում: Որպեսզի ասածներս մերկապարանոց չինչեն, համապատասխան մեկնաբանություններով ներկայացնում եմ Ձեր գրքում տեղ գտած մի շարք անհեթեթ և զվարճալի այնպիսի արտահայտություններից երկուսը, որոնք կսազեին միայն որոշ էքսցենտրիկ քաղաքական գործիչներին, այլ ոչ թե Ձեր նման պրոֆեսիոնալին:

Դուք գրում եք, «Ինչպես և այլ մոտեցումները, քվանտային քիմիան եղել և շարունակում է մնալ զուտ որպես քիմիայի դասական պատկերացումների «ծանրաշեն ծառա» (тремязаконная сляканика): Որպես ճշգրիտ գիտություն, քիմիան չի կարող հավերժ գտնվել իր էության նկարագրման այդքան կասկածելի մեթոդներից կախվածության մեջ: Վաղ թե ուշ մոլորման գաղտնիքը կբացահայտվի, և նա նույնպես կզգա ատոմների և մոլեկուլների վարքի կանխատեսման ընդհանրացված պատկերացումների իրական ուժը»:

Միևնույն պրոֆեսոր, Քվանտային քիմիան ատոմների և մոլեկուլների նկարագրման հերթական մոտե-

Բաց նամակ պրոֆեսոր

Վան-Վասպուրականին նվիրված միջազգային գիտաժողով

Հայոց առաջին մայրաքաղաքի՝ Վանի մասին առաջին հիշատակության 2865-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովը անցկացվեց Երևանում: Այն կազմակերպել էին «Վասպուրական» հայրենակցական միությունը, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտը, մասնակցությամբ ԳԱԱ պատմության և արևելագիտության ինստիտուտները:

Հոկտեմբերի 7-ին «Մոսկվայի տուն» մշակութազործարարական կենտրոնում կայացավ գիտաժողովի հանդիսավոր բացումը: Ուղջույնի խոսքով հանդես եկան Երևանի քաղաքապետ Գ. Բեգլարյանը, ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն Ա. Մելքոնյանը, «Վասպուրական» հայրենակցական միության նախագահ Գ. Բաղդասարյանը:

Առաջին օրվա ընթացքում կարդացված գեկուցումներից էին. «Սարգոնի 714 թ. արշավանքի երթուղու մի քանի մանրամասներ» (ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Բ. Հարությունյան), «Նորահայտ սեպագիր արձանագրությունը Դրեթոյից» (պատմ. գիտ. դոկտոր Ա. Փիլիպոսյան), «Վանը հետուրարտական դարաշրջանում» (պատմ. գիտ. թեկնածու Գ. Հակոբյան), «Վասպուրականի գրչության կենտրոնները» (պատմ. գիտ. թեկնածու Արփենիկ Ղազարյան), «Արևի քաղաքը» (ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պատմ. գիտ. թեկնածու Սիմոն Հմայակյան):

Գիտաժողովի երկրորդ օրվա աշխատանքները շարունակվեցին ԳԱԱ նախագահության կլոր դահլիճում: Նիստավար Ա. Մելքոնյանի հանգամանակից ելույթից հետո գեկուցումներով հանդես եկան պատմագիտության դոկտոր Է. Կոստանդյանը («Վանի հոգևոր-մշակութային գործիչները 19-րդ դարի երկրորդ կեսին»), պատմագիտության դոկտոր Գ. Ստեփանյանը («Վան-Վասպուրականից գաղ-

թած հայերը Բաբվում 19-րդ դարի վերջին և Առաջին աշխարհամարտի տարիներին»), պատմագիտության թեկնածու Ս. Սարգսյանը («Վանի հերոսամարտը»), բանասիրական գիտությունների դոկտոր Ա. Զաքարյանը («Վանը Սերգեյ Գորոդեցկու կյանքում և ստեղծագործության մեջ»), բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ գրականության ինստիտուտի փոխտնօրեն Վ. Դևրիկյանը («Աղբամարի ժողովրդական ավանդությունները և ստուգաբանությունները») և ուրիշներ:

Գիտաժողովի երրորդ օրվա աշխատանքները տեղի ունեցան Երևան քաղաքի պատմության թանգարանի նիստերի դահլիճում:

Ուշագրավ գեկուցումներով հանդես եկան ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պատմ. գիտ. թեկնածու Սվետլանա Պողոսյանը («Վասպուրականի զարդահամալիրը»), Սպահանի (Իրան) պետ. համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու Մոհամադ Սալեբ-Մոհամադին («Շահնամե»-ի հայկական բանասիրական տարբերակները Վան-Վասպուրականում»), բանասիրական գիտությունների դոկտոր Վ. Սվազյանը («Ավանարկներ վանեցիների պատմական հիշողության գրառման և հրատարակման պատմությունից»), ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ ֆոնդապահ Լիլիթ Սիմոնյանը («Աստղիկ դիցուհու պաշտամունքը Վասպուրականում և Տարոնում»): Ընդհանուր առմամբ, երեք օրվա ընթացքում կարդացվեց 39 դասախոսություն: Ծրագրվեց գիտաժողովի նյութերը հրատարակել առանձին ժողովածուով:

Արմեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու



Ալեքսանդր Գևորգյանին

ցում չէ, ինչպես Դուք եք կարծում, այլ տեսական քիմիայի այն բաժինը, որտեղ քիմիական միացությունների կառուցվածքը և հատկությունները, քիմիական ռեակցիաներում նրանց փոխազդեցությունները և փոխարկումները դիտարկվում են քվանտային մեխանիկայի պատկերացումների և մեթոդների հիման վրա (Տես «Քիմիական հանրագիտարան», ռուսերեն, 1998 թ., հ.2, սյուճակ 722): Այդ կուռ տեսությունը, որը Դուք անվանում եք «ժանրաշեն ծառա», լավ կյանքից չի ստեղծվել և ոչ էլ պարասպորտուցի: Դրա համար հիմք են հանդիսացել ստոմոնների և, ընդհանրապես, միկրոմասնիկների հատկությունների վերաբերյալ փորձարարական այնպիսի արդյունքները, որոնք ոչ մի կերպ չէին տեղավորվում դասական պատկերացումների շրջանակներում: Դրա մասին նշվում է նյութի կառուցվածքի վերաբերյալ ցանկացած դասագրքի նախաբանում: Եվ այն ստեղծել են ոչ թե դպրոցական մաթեմատիկայով և տարրական քիմիական գիտելիքներով զինված հետազոտողները, ինչպիսիք Ձեր համոզմամբ պահանջվում են Ձեր «տեսությունը» հասկանալու համար, այլ ժամանակի լրջագույն ֆիզիկոսները, քիմիկոսները և մաթեմատիկոսները: Դուք այդ առարկան («Բավանտային քիմիան») երևի չեք անցել, չնայած Ձեր նման խորաթափանց գիտնականի համար դժվարություն չի ներկայացնում լրացնելու այդ բացը: Իրոք, արդրով վար անողի համար տրակտորն անհմաստ է, քանի որ այն եզները լծելու տեղ չունի: Ի միջի այլոց այդ առարկան (նաև «Նյութի կառուցվածք») վերջերս հանվել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի որոշ բաժիններից, որպես ոչ մասնագիտական (սա այլ թեմա է): Այնպես որ, վստահ եմ, Ձեր «տեսության» ջատագովների թիվը շուտով կարող է բազմապատկվել: Այստեղ նպատակահարմար եմ գտնում ներկայացնել քվանտային տեսության հիմնադիրները մեկի Նոբելյան մրցանակի դափնեկիր Պաոլ Դիրակի հետևյալ խոսքը, որը, կարծում եմ, կարող է մեղմացնել ֆիզիկոսների և հատկապես քիմիկոսների (երևի բացի Ձեզանից) կողմից նյութի կառուցվածքի վերաբերյալ նոր տեսություններ ստեղծելու մոլուցքը և իրենց է-

ներգիան ուղղելու ռեալ խնդիրների լուծմանը:

«Ֆիզիկայի մեծ մասի և ամբողջ քիմիայի մաթեմատիկական տեսության հիմքը հանդիսացող ֆիզիկական օրենքները մանրամասն ուսումնասիրված են. դժվարությունը կայանում է լոկ նրանում, որ այդ օրենքների խիստ կիրառումը հանգեցնում է այնպիսի բարդության հավասարումների, որոնք հնարավոր չէ լուծել: Այդ պատճառով անհրաժեշտ է քվանտային մեխանիկայի հիման վրա մշակել մոտավոր գործնական այնպիսի մեթոդներ, որոնք օգնությամբ, առանց ավելորդ հաշվարկների, հնարավոր կլինի բացահայտել ատոմներից կազմված համակարգերի (նյութերի, Բ.Օ.) յուրահատկությունները» (Պ.Ա.Մ. Դիրակ, 1929):

Ձեր կողմից անընդհատ վկայակոչվող և բոլորիս կողմից հարգված, Նոբելյան մրցանակի կրկնակի դափնեկիր Լ.Պոլինգը, որի ատոմների էլեկտրաբացասականության գաղափարն ընկած է Ձեր «տեսության» հիմքում, լավ գիտեր Պ.Դիրակին և քվանտային տեսությունը: Սակայն դա չխանգարեց, որ նա առաջ քաշի ատոմների և մոլեկուլների նկարագրման մի շարք մոտավոր եղանակներ՝ այդ թվում նաև վալենտային կապերի մեթոդը (1928-32 թթ.), որը ներկայումս լայնորեն օգտագործվում է քիմիկոսների կողմից: Ի միջի այլոց նա առաջին Նոբելյան մրցանակը ստացել է հենց այդ մեթոդի մշակման համար, այլ ոչ թե էլեկտրաբացասականության հասկացողության ներմուծման համար, ինչպես Դուք եք կարծում:

Անդրադառնալով Ձեր մտքի «գոհարներից» և մեկին, որը գիտնականի «համեստության» գերագույն փայլատակում է: «...գիտությունը ձեռք է բերել (հանձինս այդ տեսության, Օ.Բ.) ոչ թե պարզապես ևս մեկ նոր (թեկուզ և կարևոր) ընդհանրացում, այլ այնպիսի խնդրի լուծում, որի մասին երազել է քիմիկոսների մի քանի սերունդ»:

Ինչ վերաբերում է քիմիկոսների մի քանի սերունդի երազանքին կարողանալ հեշտությամբ որոշել մոլեկուլներում էլեկտրոնային խտության թեկուզ և մոտավոր բաշխվածությունը, հետևաբար նաև կանխատեսելու նրանց ռեակցիոնունակությունը, ապա

դա վաղուց իրականացված է: Հետևաբար Ձեր կողմից առաջարկվող խիստ անհիմն մոտեցման կարիքը բոլորովին չկա: Այդ հարցի լուծման համար նախատեսված հաշվարկային քվանտա-քիմիական ծրագրերը, որոնք կարելի է անվճար ձեռք բերել համացանցից, այդ նպատակների համար լրիվ բավարար են: Ինչ վերաբերում է Ձեր առաջարկված «տեսությանը», ապա միայն շատ եական վերանայումներից հետո լավագույն դեպքում կարող է ծառայել որպես մատչելի առօրյա աշխատանքային գործիք: Հատկապես որ, ինչպես Դուք եք պնդում, դրա համար անհրաժեշտ է «միայն թվաբանության դպրոցական գիտելիքներ և քիմիայից նախնական գիտելիքներ»:

Նամակս չծանրաբեռնելու համար սահմանափակվում եմ նշված մեջբերումներով, քանի որ գիտն ուրակն ստուգելու համար մի կունեմ էլ բավարար է:

Ամփոփելով իմ ասելիքը՝ կրտսեր գործընկերոջ իրավունքով ցանկանում եմ հիշեցնել, որ գիտության պատմության մեջ չի եղել թեկուզ և մեկ դեպք, երբ գիտական նոր գաղափարը միանգամից ընդունվել: Մյուս կողմից բացակայում են նաև այնպիսի դեպքեր, երբ նոր գաղափարների ջատագովները դրանք տարածում էին ստիպողաբար (նկատի չունեն քրիստոնեությունը, իսլամը, կոմունիզմը և այլն): Ինչ վերաբերում է մասնուկում համախ տեղ գտնող Ձեր ելույթներում այս կամ այն գիտական պաշտոնյաների հասցեին հնչող մերկապարանոց վիրավորանքներին ու մեղադրանքներին, ապա կարող եմ ասել, որ Ձեր հանդեպ նրանց վերաբերմունքը չի կարող հիմք հանդիսանալ Ձեր տեսության ընդունման կամ մերժման համար, քանի որ պաշտոնյաները ժամանակավոր են, իսկ գիտական ճշմարտությունը՝ հավերժական: Մյուս կողմից, ես քաջատեղյակ եմ, որ այդ պաշտոնյաներն ամեն կերպ օժանդակել են, որպեսզի հնարավորություն ունենաք Ձեր գաղափարները ներկայացնելու ցանկացած երկրում, ինչը Դուք մի քանի անգամ ապարդյուն փորձել եք՝ ծախսելով նրանց օժանդակությունը մեզ հետևյալով զուրկությունները: Իսկ Դուք նրանց հասցեին անխնայ ցեխ եք շարժում: Այնպես որ Ձեր

ԳԻՏԱԿԱՆ

Ինչու են աշխարհի ծառերի տերևները թափվում

Բրիտանացի գիտնականի նոր տեսությունը բացատրում է, թե ինչու են աշխարհի ծառերի տերևները փոխում գույնն ու թափվում:

Ավանդաբար կարծում են, որ ջերմաստիճանի իջեցման պատճառով ծառերը սկսում են տնտեսել իրենց ռեսուրսները, ինչի համար էլ ազատվում են տերևներից, որպեսզի ստիպված չլինեն ապահովել նրանց կենսունակությունը:

Ըստ «The Daily Telegraph» ամսագրի, պրոֆեսոր Բրայան Ֆորդը ենթադրում է, որ տերևաթափը ծառերի համար այն նույն իմաստն ունի, ինչ մարդու համար՝ գնալ զուգարան. ազատվելով տերևներից (ծառերն ազատվում են ներսում հավաքված ավելորդ նյութերից): Պրոֆեսորը պարզել է, որ թափվելուց առաջ տերևների բաղադրության մեջ ավելանում է վնասակար բաղադրիչների, ծանր մետաղների քանակը և, փաստորեն, ծառը նախընտրում է ազատվել այդ նյութերից:

«Կարևոր է հասկանալ, թե ինչ է տեղի ունենում աշխարհում, երբ տերևները դառնում են կարմիր կամ դեղին, իսկ հետո թափվում: Բույսերի մոտ տեղի է ունենում տարեկան, այսպես ասած, դատարկում», - ասել է գիտնականը: Պրոֆեսորի կարծիքով, դա չպետք է մարդկանց խանգարի ստանալ գեղագիտական հաճույք աշխարհում գույներից:

Ֆիզիկական և մտավոր ներուժը արժե օգտագործել ավելի առարկայական խնդիրների լուծման համար, եթե իհարկե կարող եք: Ինչ վերաբերում է գիտական հրապարակումներին, որն ըստ Ձեզ միտումնավոր կերպով արգելակվում են Հայաստանում գիտական չինովիկների կողմից, ապա Դուք շատ լավ գիտեք, որ միջազգային ցանկացած հանդես պատրաստակամությամբ ընդունում է շատ թե քիչ արժեք ներկայացնող ցանկացած աշխատանք, հատկապես որ այն հավակնում է «հեղաշրջում կատարելու գիտության մեջ»: Այնպես որ, Դուք հրատարակվելու անսահման հնարավորություն ունեք և պետք չէ մոլորության մեջ գցել ոչ միայն շարքային մարդկանց, այլև հանրապետության վարչապետին:


Վերջում հայցում եմ Ձեր ներողամտությունը, եթե նամակիս որոշ հատվածներ վիրավորական թվան: Հավատացեք, ես շատ հեռու եմ Ձեզ վիրավորելու մտադրությունից: Իսկ որոշ արտահայտություններ թույլ տվեցի միայն ու միայն ինձ համար հարցի կարևորությունը ընդգծելու և նամակիս լրագրային ոճը պահպանելու համար:

Հարգանքներով՝ Օլեգ ԲԱՄԱՆՅԱՆ
Քիմիական գիտությունների դոկտոր,
ԵՊՀ դոցենտ
27.09.2010թ.

P.S. Համոզված եմ, որ այս նամակի հրապարակումից հետո ես նույնպես կհայտնվեմ «Իջի բիրների» շարքում: Սակայն հաշվի առնելով ինձ համար, որպես շահագրգիռ մասնագետի և դասախոսի, հարցի կարևորությունը, որոշեցի, այնուամենայնիվ գրել այս նամակը, որն, ինչ խոսք, ոչ միայն չի կատարում Ձեր նման «դուբեշ» գիտնականի գրական-գեղարվեստական մոլուցքը, այլև դրա համար կարող է նոր խթան հանդիսանալ:
Այնուամենայնիվ ես ընդունում եմ Ձեր առաջարկը և միշտ պատրաստ եմ գրադասարանի մոտ, ինչպես Դուք եք փղայական կեցվածքով ասում, ապացուցել Ձեր փոստային սեանկությունը բոլոր քիմիկոսների, ֆիզիկոսների և ուսանողների ներկայությամբ: Սակայն՝ միայն գրագով
Օ.Բ.

Պայծառ անհատականություն և վաստակաշատ գիտնական

Վերջերս վախճանվեց Հայկական ԽՍՀ գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ, հանրապետության պետական մրցանակի դափնեկիր, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արամայիս Ամրաստանի Եղիգարյանը՝ հայ ստեղծագործող մտավորականության վառ անհատականություններից մեկը, որն իր ողջ կյանքը նվիրել էր գիտական և մանկավարժական գործունեությանը իր հայրենիքում: Նրան բնորոշող գիտելիքի տարածման, գիտական արժեքների ստեղծման, երիտասարդ գիտական և ինժեներային կադրերի դաստիարակման գործին անսահման մեծ նվիրումն էր ու բեղմնավոր գիտական գործունեությունը: Ողջ կյանքի ընթացքում Ա.Ա. Եղիգարյանը դասեր էր սկզբունքային պահանջկոտություն իր և իր շրջապատի հանդեպ՝ մնալով բարի և արդար: Նրան սիրում և հարգում էին որպես բարեսիրտ մարդու և ճշմարտության համար պայքարող անսասան մարտիկի: Նրա, ինչպես և 20-րդ դարի 30-40-ական թվականների նրա սերնդակիցներից շատերի ճակատագրի վրա անջնջելի հետք է թողել Հայրենական մեծ պատերազմը:



սահմանափակվել միայն մանկավարժական գործունեությամբ: Բնության կողմից նրան տրված ունակությունները և հակումը դեպի ստեղծագործելը նրան բերեցին արագ տեմպով զարգացող Երևանի մաթեմատիկական մեքենաների ինստիտուտ, որեղ նա ամբողջովին ընկղմվեց ինստիտուտում մշակված մաթեմատիկական մեքենաների հիշող սարքերի համար մագնիսական թաղանթների ստեղծման գիտակազմակերպչական գործունեության մեջ: Այդ տարիներին ինստիտուտի գործունեությունը գիտության և տեխնիկայի խոշորագույն կազմակերպիչ, ՀՀ

ԳԱԱ ակադեմիկոս Ֆադեյ Սարգսյանի ղեկավարությամբ բուռն զարգացում էր ապրում և հիմք դառնում յուրօրինակ հաշվիչ մեքենաների ստեղծման համար, որոնք լայն կիրառություն գտան Խորհրդային Միության գիտության և տեխնիկայի տարբեր բնագավառներում: Արամայիս Եղիգարյանի ավանդ շատ կարևոր էր այդ առաջադիմական գործընթացում:

Արամայիս Եղիգարյանը ծնվել է 1924թ. ապրիլի 17-ին Աշտարակի շրջանի Եղվարդ գյուղում և մեծացել է Ամրաստան Եղիգարյանի բազմազավակ և ավանդապաշտ ընտանիքում: Գերագանցությամբ ավարտելով դպրոցը՝ 1940թ. նա ընդունվել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի քիմիկատեխնոլոգիական ֆակուլտետը և, ինչպես իր հասակակիցներից շատերը, 1942թ. մեկնել է ռազմաճակատ և հերոսաբար կռվել Ֆաշիզմի դեմ: Պատերազմի ավարտից հետո Ա.Ա. Եղիգարյանը 1946թ. կրկին վերադարձել է իր շատ սիրելի Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտ և 1950թ. գերագանցությամբ ավարտել այն «Էլեկտրաքիմիական արտադրության տեխնոլոգիաներ» մասնագիտությամբ: Այնուհետև ուսումը շարունակել է Կիևի պոլիտեխնիկական ինստիտուտում՝ նույն էլեկտրաքիմիա մասնագիտությամբ՝ Լ. Ի. Անտրոպովի հանրահայտ գիտական դպրոցում:

Հաջողությամբ պաշտպանելով թեկնածուական դիսերտացիան՝ Եղիգարյանը 1953 թ. վերադարձել է Երևան, իր պոլիտեխնիկականը՝ անտեսելով Կիևում մնալու և ակտիվ գիտական գործունեությամբ զբաղվելու գայթակղիչ առաջարկները:

Լայն գիտական էրուդիցիան և խորը իմացությունը Ա.Ա. Եղիգարյանին թույլ տվեցին զբաղվել ակտիվ մանկավարժական գործունեությամբ էլեկտրաքիմիայի և ֆիզիկայի ամբիոններում՝ որպես ընդհանուր ֆիզիկայի ամբիոնի ղոցենտ և այնուհետև քիմիկատեխնոլոգիական ֆակուլտետի էլեկտրաքիմիական արտադրության տեխնոլոգիաների ամբիոնի ղոցենտ, իսկ հետագայում՝ նաև ամբիոնի վարիչ: Ա. Եղիգարյանը ակտիվ մասնակցություն է ունեցել ինստիտուտի ուսումնական կազմակերպչական գործունեությանը: Նրա ձգտումը և արդյունավետ գործունեությունը ուսումնական պրոցեսի կազմակերպման գործում բարձր են գնահատել գործընկերներն ու հանրապետության խոշորագույն և հանրահայտ այն բուհ-ի ղեկավարությունը, որը կադրեր էր պատրաստում հանրապետության բազմապրոֆիլ արդյունաբերության համար: Սակայն Ա. Եղիգարյանը չէր կարող

Արդյունավետ էին նրա կողմից իրականացված և իր կողմից ղեկավարվող գիտական անձնակազմի ուսումնասիրությունները՝ ուղղված մագնիսական թաղանթների ստեղծմանը, որի համար Ա. Եղիգարյանը արժանացել է պետական մրցանակի և այնուհետև պաշտպանել դիսերտացիա՝ ստանալով տեխնիկական գիտությունների դոկտորի գիտական աստիճան և նոր թափով շարունակել գիտական գործունեությունը: Նրա հարազատ պոլիտեխնիկական ինստիտուտում ուշի-ուշով և հպարտությամբ էին հետևում իրենց շրջանավարտի և գիտնական-մանկավարժի հաջողություններին:

Հաշվի առնելով հանրապետությունում բարձր որակավորում ունեցող ինժեներական կադրերի պատրաստման կարևորությունը՝ Արամայիս Եղիգարյանին կրկին հրավիրեցին պոլիտեխնիկական ինստիտուտ ղեկավարելու էլեկտրաքիմիական արտադրության տեխնոլոգիաների ամբիոնը, որտեղ նա աշխատեց մինչև 1995 թվականը: Նրան, որպես իրական հայրենասերի և քաղաքացու, հուզում էին այդ ժամանակաշրջանում իր երկրում կատարվող ճակատագրական փոփոխությունները: Նա ամբողջ էությամբ աջակցում էր ազգին հուզող բոլոր հարցերին՝ շարունակելով ակտիվ գիտամանկավարժական գործունեությունը:

1995թ.-ից Ա. Եղիգարյանի գիտական գործունեությունը շարունակվեց զարգանալ Մոսկվայում, ՌԳԱ ֆիզիկական քիմիայի ինստիտուտում, որտեղ նա տեղափոխվել էր ինստիտուտի ղեկավարության հրավերով: Այստեղ նա աշխատեց շուրջ 10 տարի՝ ստանալով լուծույթներից քրոմի նստեցման պրոցեսը ղեկավարող հետաքրքիր արդյունքներ: Այդ աշխատանքներն ունեին կարևոր կիրառական նշանակություն:

Կյանքի վերջին տարիներին Արամայիս Եղիգարյանը ապրել է ԱՄՆ-ում: Սինջև կյանքի վերջը նա հավատարիմ է մնացել իր սկզբունքներին՝ լինել ազգիվ ու պահանջկոտ, ճշմարիտ քաղաքացի և հրաշալի ընկեր:

Արամայիս Եղիգարյանի հիշատակը, որպես քաղաքացու, գիտնական-հայրենասերի, հանրապետության ինժեներական կադրերի մի քանի սերունդ կրթող բարձր որակավորում ունեցող մանկավարժի և հիանալի վառ անհատականության, միշտ վառ կմնան նրա գործընկերների և ընկերների սրտերում:


Աղոլ ֆ ՍԱՆԹԱՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը հրատարակել է հանել «Հովհաննես Թումանյանի կյանքի և ստեղծագործության պատմություն (1869-1908)» ժողովածուն, որը օրերս ներկայացվեց մեծ բանաստեղծի անունը կրող թանգարանում: Գիրքը փապագրվել է սփյուռքահայ գործիչ, բարերար Հարություն Սիմոնյանի զավակների մեկենասությամբ:

«Նա մեծ էր, քան եղավ՝ Կրիեզերքի Նման անեզր»

Ներկայացվեց Հովհաննես Թումանյանին նվիրված նոր ժողովածու

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության լույս ընծայած ժողովածուն շնորհավորեց ՀՀԳ Մախագահ Լևոն Անանյանը՝ ասելով. «Մենք գործ ունենք գիրքերույթի հետ, ծանրակշիռ մի հատորի հրատարակության առիթով: Սա տարիների քրտնաջան աշխատանք է, և այն կազմողները հերոսական գործ են կատարել՝ փշուր-փշուր հավաքելով տարբեր աղբյուրներից՝ վիթխարի նվիրումով:



Նրանք այդ նյութերով կարողացել են պատկերել այն հրաշալի ճանապարհը, որով անցել է մեծ լոռեցին, և մենք պիտի գլխարկներս հանենք և մեր խոնարհումի խոսքն ասենք կազմողներին, և ես ուզում եմ հրապարակել նրանց անունները իմ և ձեր ծափահարություններով. Հասմիկ Աբեղյանին, Սուսաննա Հովհաննիսյանին, Անահիտ Վարդանյանին, Եվա Մնացականյանին, Լուսիկ Կարապետյանի հիշատակին, Ռիտա Վարժապետյանին և, վերջապես, «սիմֆոնիկի դիրիժորին»՝ Վլադիմիր Կիրակոսյանին:

Ստեղծվել է գրողի կյանքի մի հատվածը, խուլմբն աշխատելու է, որպեսզի ստեղծվեն երկրորդ և երրորդ հատվածները»:

Լ. Անանյանն այնուհետև ներկայներին տեղեկացրեց, որ գրողների միության վարչության նիստում քննարկվել է լոռեցի Աժ պատգամավորի՝ Վիկտոր Դալլաբյանի մի նախագիծ, ըստ որի առաջարկվում է Վանաձոր քաղաքն անվանել քաղաք Թումանյան, ձեռք բերել Դսեղում գործող, Հ. Թումանյանի տուն-թանգարանի հարևանությամբ տեղակայված՝ մեծ բանաստեղծի եղբոր՝ Վահանի նախկին տունը և այն ընդգրկել տուն-թանգարանի կազմում, Երևանում գտնվող Հ. Թումանյանի թանգարանը դարձնել բունթանգարանագիտության կենտրոն՝ նրան տալով թանգարան-ինստիտուտի կարգավիճակ:

ՀԳՄ և Աժ համապատասխան բաժնի առաջարկը ուղարկվել է ՀՀ կառավարություն, և Լ. Անանյանը վստահություն հայտնեց, որ այն կիրականացվի:

Նոր հրատարակված ժողովածուի վերաբերյալ խոսք ասացին նաև ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդրյանը, Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն Ավիկ Իսահակյանը, փոխտնօրեն Վարդան Դևրիկյանը, խմբի ղեկավար Վլադիմիր Կիրակոսյանը, գրականագետ Անահիտ Չարենցը և ուրիշներ:

Վանիկ ՍԱՆԹՐՅԱՆ

«Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսը իբրև գիտական մտքի փարոս

Ծայր էր առել Երկրորդ համաշխարհային պատերազմը, երբ 1940 թ. նոյեմբերին հիմնադրվեց ՀԽՍՀ «Տեղեկագիր հասարակական գիտությունների» ամսագիրը, ներկայումս՝ ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», որի 70-ամյակին էր նվիրված ՀՀ ԳԱԱ Մախագահության նոյեմբերի 18-ի հանդիսավոր նիստը:

Տարիների հեռվից արժևորելով հայրենական գիտության անվիճելի և բացառիկ դերը հասարակության զարգացման գործընթացում՝ ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը իր ողջույնի խոսքում ընդգծեց պարբերականի կարևորությունը հասարակագիտական միտքը ներկայացնելու հարցում ինչպես հայաստանյան, այնպես էլ արտասահմանյան գիտական հանրության առջև:

Հանդիսությանը ներկա անվանի գիտնականները (որոնց աշխատություններից շատերը միջազգային ճանաչում են ստացել)՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Նիկոլայ Հովհաննիսյանը, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Աշոտ Մելքոնյանը, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Աղասյանը, բանասիրության դոկտորներ Ազատ Եղիազարյանը և Լալիկ Խաչատրյանը երախտիքի խոսքեր ուղղեցին հոբելյար հանդեսին՝ նշելով նրա կարևորությունը իրենց գիտական մկրտության գործում:

Տարբեր ժամանակներում պատկառելի հանդեսի խմբագիրներն են եղել գիտության ակադեմիկոսներ Երկայացուցիչներ Ս. Կարապետյանը, Հ. Բատիկյանը, Մ. Ներսիսյանը, Հ. Օրբելին, Գ. Աբովը, Ա. Հովհաննիսյանը, Հ. Ինժիկյանը, Վ. Միքայելյանը: Ներկայումս հանդեսը խմբագրում է պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, պատմության ինստիտուտի Հայ հասարակական մտքի և մամուլի պատմության բաժնի վարիչ Ալբերտ Խառատյանը, որն իր բարձր ինտելեկտով, հանրագիտարանային իմացությամբ պատշաճ մակարդակ է ապահովում վաստակաշատ հանդեսին:

Բազմալեզվյա հանդեսի էջերում հրապարակվում են պատմագիտության, մասնավորապես՝ հայագիտության կնճռոտ հարցերին, ինչպես նաև արդի գիտական միտքը հուզող խնդիրներին նվիրված ուսումնասիրություններ:

Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդրյանը բարձր գնահատեց «Լրաբերի» գիտական կարևորությունը և արդիականությունը: Դա արտացոլվեց նաև հանդեսի արդյունավետ աշխատանքի համար պրեզիդենտ Ռադիկ Մարտիրոսյանի կողմից աշխատակիցներին վաստակագիր (զխավոր խմբագիր Ա. Խառատյանին) և պատվոգրեր ու գովեստագիր շնորհելու միջոցով:

(Սկզբը՝ № № 9-10 համարներում)

Մի այլ արհեստական ավերածություն էր յու երկինջուհի տառերը կրկնակի արհեստական ի և ւ տառերով փոխարինելը, որը կենդանի խոսքում երբևէ չի կարողացել փոխել յու-ի հնչումը: Փոխանակ հաշվի առնելու լեզվում գործող կենդանի օրենքները և դրանց ճիշտ ու տեղին կիրառությունը, արհեստական ու հակալեզվականը անփոփոխ պահելու ճիգերի մեջ հասնում են ծայրահեղ անմտությունների: Տեսե՛ք, տեսե՛ք, «այդ ւ-ն դրուելով ո-ի կողքին, ստացվում է ու շողկապը»: Ուրեմն պապերի կողմից ավանդված ու «երկբարբառ բնականը» այսօր ընդամենը շողկապ է և ոչ թե մի պարզ ծայրավոր: Մնում է պարզել, թե տուն, ջուր, ունակ և նման հազարավոր բառերում ու-ն շողկապ է, թե՞ «երկբարբառ բնական»: 24^{րդ} տարի է, որ ուրանում են ու պարզ ծայրավորի գոյությունը՝ այբբենաբանում էլ նրա տեղը բազմեցնելով արհեստական և տառը: Երկու դեպքում էլ վերագրումը արհեստական է: Կամ՝ «Աբեդյանը

լով ու-ի և ա-ի նույնությունն ու տարբերությունը, նույնիսկ հատուկ հոգատարությամբ ու հսկողությամբ գրվող ավետարաններում միևնույն բառերը գրվում էին կրկնակի գրությամբ, ինչպես՝ Յաւահաննէ-Յովհաննէ, Նազարացի-Նազովրացի, Բաւանդակ-Բովանդակ, համբաւ-համբով: Մյուս կողմից, ա և ո գրերն էին հետևողականորեն հերթափոխում իրար, ինչպես՝ գրաւը-գրող, կարաւը-կարող, բարեխաւս-բարեխոս, ստացաւը-ստացողացն: Այս խառնագրության փաստերը հանգամանորեն արձանագրել է Ս. Գյուլբուրդայանը «Հայերենի ուղղագրության պատմություն» գրքում:

Երբ վերջապես այդ խառնագրությունից լեզուն փրկելու համար ստիպված եղան հունական օ տառը մտցնել մեր լեզվի համակարգ, սկսեցին աւ-երը օ դարձնել նաև այնպիսի տեղերում, որտեղ նրանք ավ տառակապակցություն են և ոչ թե օ ծայրի նշան: Հենց այդպիսի բառերից են Որբերյանի մեջբերած Պաւղոս, Աւգոստոս օտարագրի հատուկ անունները, ո-

պանում են իրենց գրությունը, ինչպես՝ օգուտ-անօգուտ, օր-կեսօր:

Դրանով վերականգնվեց հայոց լեզվի պատմական ուղղագրությամբ հիմնավորված ո գրության իրավունքը, որն իր հերթին դուռ է փակում տեղի-անտեղի բառեր խուժող օ-երի հեղեղի առաջ: Մեկընդմիջտ պետք է հասկանալ, որ աւ երկտառը մտցվել է օ-ի տեղը որպես նրա երկար հնչողության պատրանք:

Ինչ մնում է շահարկության առարկա համանունությանը, ապա չկա որևէ լեզու, որ ազատ լինի այդ «արատից»: Պարզապես կոնկրետ խոսքի կապակցության մեջ յուրաքանչյուր համանուն բառ ցուցադրում է իր իրական իմաստը և շփոթության որևէ առիթ չի տալիս: Հետևապես նման համանունների խաղաղկումով չի կարելի մանկատարտեզային ներկայացումներ կազմակերպել: Բավարարվենք մի օրինակով: Հոր փորողը ինքը կընկնի մեջը: Նա հոր փողերը կողոպտում է: Ի՞նչ որակի մարդ պետք է լինել՝ պնդելու համար, թե այդ երկու հոր-երը իրեն շփոթության մեջ են պա-

բառում: Այս աննախադեպ խառնագրությունից լեզուն բեռնաթափելու համար Գր. Տաթևացին 13-րդ դարում գիտնականի բարեխղճությամբ պարզեց, որ ե և է գրերը իրարից ոչ թե ծայրի տևողությամբ, այլ արտասանական ուժգնությամբ են տարբերվում, և սահմանեց օրենք, թե է պետք է գրել բոլոր այն տեղերում, որտեղ է-ն հնչյունափոխության է ենթարկվում: Այսպես՝ սեր-սիրո, գետ-գիտնական, կետ-կիսատ, բայց նետ-նետի, գետ-գետի, կետ-կետադրել: Դա առաջին հերթին խփում էր լեզվին պարտադրված օրենքի այն պահանջին, որի համաձայն բառավերջում միշտ պետք է գրել է, որը, սակայն, չի հնչյունափոխվում: Տաթևացու այս հայտնությունը ևս հարցի լուծում չէր կարող դառնալ, որովհետև գործնականում անհնար է այդ ելակետով հստակություն մտցնել ուղղագրության մեջ:

Ինչպես ո-օ-ի դեպքում, ե տառը ևս բառասկզբում հնչական փոփոխություն է կրել: Այստեղ էլ ե-ով սկսվող բառերի հիմնական մասը փոխվել է յե երկինջուհի, ինչպես՝ երես, երեկո, երկար, եզակի: Իսկ բառամիջում և բառավերջում իսպառ վերացել է նրանց հնչական տարբերությունը: Ե և է գրերի հնչական տարբերությունը հանդես է գալիս միայն բառասկզբում, որտեղ է-ով սկսվող բառերը խիստ սահմանափակ են: Ահա թե ինչու ճիշտ պետք է համարել մեր լեզվագետների դիրքորոշումը, որ սկսած Գրիգոր Տաթևացու ժամանակներից՝ հայտնի տեղերում նախապատվությունը տրվել է ե-ի գրությանը՝ վերջնահաշվում է-ին վերապահելով բառասկզբում նրա ածանցված ձևերը, ինչպես՝ էակ-անէական, էջք-վայրէջք, էկրան-լայնէկրան և այլն:

ՀԱՄԱԼԱԿՈՍԿՈՍԱԿԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԳՐՈՒՄԸ ՄԱՅՐԵՆԻ ԼԵՂՎԻ ՎՐԱ

իւ-ն դարձրեց յու, ինչպես արին-արյուն: Դրանով առաջանում է արտասանական դժվարություն: ... Որպեսզի յ-ն լսելի արտաբերեք, ստիպված եք ասել՝ սըյուն, ձըյուն, հըյուր, գըյուր, Յըյուր և այլն: ... Մինչդեռ դասականով իւ (իու) արտասանելը ավելի դյուրին է՝ սիուն, ծիուն, հիուք, գիուր, հնչիուն, դիուրին, բարութիուն, Հիուրոն: Խնայելով հայոց լեզվի բառապաշարը՝ մենք հրաժարվում ենք գնահատական տալուց: Մարդ ակամա մտածում է, թե այդ կարգի նենգամտությունների դիմող մարդիկ մինչև ուր կարող են հասնել: Ինչպես՝ կարելի է պնդել, թե ծիուն ասելը ավելի հեշտ է, քան ծյուն ասելը մեզը խոթելով մի ավելորդը: Ինչ մնում է մեջբերված Հյուզո-Հիուզո բառին, մենք չգիտենք, թե ֆրանսիացին ինչպես է հնչում այն:



րոնց ավ-երը մեր լեզվում հայերեն ավ-երի նմանակմամբ փոխվել են պարզ օ ծայրի՝ Պողոս, Օգոստոս: Ինչպես երևում է վերոգրյալ օրինակներից, քանի դեռ չկար հունական օ տառը, հայերեն բառերի աւ արհեստական տառակապակցությանը փոխարինում էր մերոպայան ո գիրը, որն ապացույց է, թե ո-ն բառերի մեջ պահպանել է իր հնչողությունը, հնչական փոփոխության չի ենթարկվել: Երևում է չի կարելի ասել ո-ով սկսվող բառերի վերաբերյալ, որովհետև այդ կարգի բառերի մի որոշակի շերտում ո-ն վերափոխվել է վո երկինջուհի: Որ ո-ի վո դառնալը հետնամուտ իրողություն է, երևում է թեկուզ նրանից, որ այդ կարգի բառերը բառի երկրորդ բաղադրիչ դառնալու դեպքում կորցնում են վ հնչյունը, ինչպես՝ անողորմ, անորոշ, բախտորոշ, անորակ և այլն: Թերևս այդ էր պատճառը, որ բառասկզբում հանդես եկող վո-ն չգրեցին երկտառով՝ չհաշված 1922-1940 թթ.:

Բայց լավ գիտենք հայոց լեզվի բնավորությունը՝ բացառություն չունեցող իր կայուն օրենքով: Յուրաքանչյուր օտար բառ, որ ունի իրար կից հանդես եկող երկու ծայրավոր, հայոց լեզուն այդ կից ծայրավորներից թույլի «զխի՛ն խփում» է, դարձնում բաղաձայն, ինչպես՝ Ուխյան-Վիյան եուրու-եվրո, հրեա-հրյա, Ֆրանսիա-Ֆրանսյա: Հիուզո-Հյուզոն էլ այդ օրենքի տակ ընկած բառ է:

Օ-ն (տառերի անուանումը՝ օ-վո)

Այստեղ արդեն պարոն Որբերյանը և մյուսները աչքը տեսածը նկարում են՝ առանց ուղեղի մասնակցության: Նրանց բնավ հարկավոր չէ իմանալ, թե ինչպես՝ սեղավ, որ միևնույն հնչյունի համար հայոց լեզվում ստեղծվեց երկու տառ: Նկարը տեսե՛լ են, վերջ: Նկարը (գրահամակարգը) փոխել չի կարելի: Մինչդեռ միևնույն հնչյունի համար երկու տառ ստեղծելու խնդիրը ունեցել է խորքային դրդապատճառ:

Հայոց լեզվի ծայրավորները իրարից տարբերվում են արտասանական, հնչական ուժգնությամբ՝ ո, ա, ե, ի, ու, ը, որով և պայմանավորվում է խոսքի մեջ նրանց հնչյունափոխությունը: Մինչդեռ Թրակացու «Բերականության» մեջ հունարենի ծայրավորները դասակարգվում են ըստ նրանց արտասանական տևողության՝ բաժանվելով երեք խմբի՝ կարճ, միջին (երկամանակ) և երկար: Թրակացու թարգմանիչները հայերենի ծայրավորներն էլ դասակարգեցին հունարենի սկզբունքով՝ ընդունելով երկու երկար՝ ե, ա (ով), որոնք համարեցին ե և ո ծայրավորների երկար արտասանությունը, երեք կարճ՝ ե, ո, ւ (ու) և երեք երկամանակ՝ ա, ի, ը, որոնք կարող են և՛ երկար, և՛ կարճ արտասանվել՝ նայած տեղին: Հայոց լեզվի հետ առնչություն չունեցող այս արհեստականությունը մտցնելով գրահամակարգ՝ բառագրության մեջ ստեղծվեց մի անորակելի խառնաշփոթություն ու քաոս: Մի կողմից, չհասկանա-

իում: էլ չենք խոսում այն ստահակության մասին, թե հոր և հոր չգրելու դեպքում մենք կորցնում ենք մեր բառերից մեկը: Ի դեպ, կոնկրետ ո-ի հետ կապված՝ մենք գիտենք մի իրական համանուն՝ հոտ, որը մի դեպքում նշանակում է բուրմունք, մի այլ դեպքում՝ ոչխարի խումբ: Մյուս դեպքերում մի բառի փոփոխված ձևը նույնանուն է մի այլ արմատական բառի հետ, ինչպես՝ հայր-հոր և հոր արմատական բառը, որոնք, սակայն, կոնկրետ խոսքի մեջ շփոթություն առաջացնել չեն կարող:

Ե-է

Ի տարբերություն ո և օ տառերի, որոնք տարբեր ժամանակներում են մուտք գործել հայոց այբուբեն, հետագայում բառասկզբի որոշ բառերում հանդես բերելով հնչական տարբերություններ, ե և է տառերը սկզբնապես եղել են մերոպայան այբուբենում՝ որոշակի հնչական տարբերությամբ: Հնչական այդ տարբերությունների առնչությամբ Ղազարոս Աղայանը ժամանակին արձանագրել է, թե «եչ (ե) տառը կատարել է իսկապես մեկ հնչյունի պաշտոն, բայց այդ հնչյունը եղել է նուրբ, միջակ և հաստ: ... Հայոց աշխարհում չկա ոչ մի գավառ, ուր էական դերանուն ես-ի հնչմունքը շփոթելիս լինին օժանդակ բայ ես-ի հետ: Դերանունը ամեն տեղ էտոով է, իսկ բայը՝ առանց էտոի: ... Այս ան-էտո եչից մինչև ավելի հաստ է-ն մի քայլից էլ մոտիկ է. ահա թե ինչու նրա տեղ կարող էին գրել և եչ» (Ղ.Աղայան, հ. 3, էջ 458-469):

Սակայն ե-է-ի այդ տարբերությունը այնքան թույլ է եղել նրանց հնչական մերձավորության համեմատությամբ, որ միշտ էլ շփոթության դուռ է բացել բառի բոլոր դիրքերում: 9-րդ դարից մեզ հասած Լազարյան ավետարանում ե և է տառերի գրությունը ցուցադրում է այդ շփոթությունը: Բառասկզբում հանդիպում ենք երիսաց, եղիցին, եհաս, եգիտ, եին, նաև է, էր: Բառավերջում՝ ասէ, գտանէ, անցցէ, բայց նաև՝ եթէ, թե: Բառամիջում ևս նույն պատկերն է՝ կացէք, արածէք, ելէք, բայց նաև՝ կարացեք, ամենքքին, կարեն: Բառամիջում միևնույն բառը հաճախ գրվում էր տարբեր ձևերով, ինչպես՝ գեթ-գէթ, եթե-եթէ, ալէկոծ-ալեկոծ, որդեգիր-որդեգիր, աղավնեվաճառ-աղավնեվաճառ:


Այս խառնագրությանը նպաստեց հունարեն քերականների մտցրած օրենքը, որով հայերենի ծայրավորները դասակարգվում են հունարենին հարազատ ձևով՝ ըստ արտասանական տևողության, որի համաձայն իբր ունենք կարճ, միջին և երկար արտասանվող ծայրավորներ: Երկար արտասանվող ծայրավոր համարեցին նաև է ծայրավորը: Եվ որպեսզի երկար արտասանվող վանկերով ևս հարստացնեն հայոց լեզուն, տեղի-անտեղի է մտցրին պատահած

Հ-Զ

«Յ.տառ երկծայն, երբեմն բաղաձայն համարեալ՝ որպէս հ թոյլ և անհազագ, և երբեմն ծայնաւոր դատեալ, որպէս սկզբնաւորութի հնչմանցս ե և ի. ուստի և անուն նորա յի: Ըստ առաջնոյն ի սկիզբն բառից հնչէ կիսածայն հ կամ ըի. գոր օրինակ՝ յազ, յածիմ, յամեմ, յանկարծ, յետ, յիսուս, յուզիմ ևն. այլ ի վերջն մնա անծայն:

գոր օրինակ՝ գայ, տայ, արքայ, գոյ, երեկոյ ևն: Բաց ի քանի մի բառից՝ յորոց ի վերջն հնչէ որպէս է, թերատ. գոր օրինակ, վայ, հայ, ըստ ոմանց նաև բայ, մակբայ, խոյ»: Մխիթարյան լեզվագետների կողմից «յ» տառին տրված ծայնային (հնչական) յուրահատկություններին ու գործածության դեպքերին տրված 11 դիտարկումներից առաջին այս երկու նախադասությունը լիարժեք բացահայտում է հունարենների մտցրած ուղղագրության արհեստականությունը: Նախ՝ ուրացվում է յ տառի ծայնորդ բաղաձայն լինելը, որովհետև երկբարբառ ստեղծելու համար յ-ին արհեստականորեն վերագրել են ե և ի ծայնավորների արժեք՝ ստեղծելով եա, իու «երկբարբառներ». «Երբեմն ծայնավոր դատեալ՝ որպէս սկզբնաւորութի հնչմանցս ե և ի»: Ապա մատնացույց է անում մինչ օրս չբացահայտված մի գաղտնիք. «Յ. տառ երկծայն, երբեմն բաղաձայն համարեալ, որպէս հ թոյլ և անհազագ...»:

Իսկ թե ինչու հ-ով սկսվող բառերի մի ամբողջ շարք որոշեցին գրել յ-ով, ինչ լեզվի ազդեցությամբ, մինչև հիմա էլ պատասխան չունի: Մեր կարծիքով, այդ պատասխանը պետք է որոնել Դավիթ Անհաղթի, Մովսեսի կամ Անանուհի մոտ, ինչպես ուս, ուի, եա, իւ, աւ «երկբարբառների» դեպքում ենք պատասխանը գտնում նրանց մոտ: Անփոփոխ մնացած և մեզ հասած իրողությունն այն է, որ հ-ով արտաբերվող այդ կարգի բառերը երբեք չեն փոխել իրենց արտասանությունը: Ի՞նչ անհրաժեշտությամբ պետք է հայը փոխեր իրենից անբաժան, իր սննդաբույս համեմի արտասանությունը և դարձներ յամեմ: Այսօր մատնական շահարկման առարկա դարձած «խեղագրությամբ» մեր լեզուն (լեզուն և ոչ թե այս կամ այն լեզվաբանը, որը լեզվի պահանջը կատարողն է միայն, որը կարող է նաև սխալվել) վերականգնել է իր բնական ու անխաթար ուղղագրությունը և այլևս իր հ-ն արհեստականորեն չի փոխում յ-ով:



ՍՈՒՐԵՆԻ ԿԱՍՏԱՆԻՆԻ ԱՐԵՎՄՏՅԱԼ ՆԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ն Ա Յ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Քիչ աղ, քիչ ինֆարկտ

Կալիֆոռնիայի համալսարանի գիտնականների կատարած հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ եթե ԱՄՆ-ում աղի օգտագործման միջին օրական ծավալը կրճատվի ընդամենը 3 գրամով, ապա հնարավոր կլինի կանխել մինչև 66 հազար ինսուլտ, 90 հազար ինֆարկտ և 92 հազար մահեր՝ առողջապահության ծախսերից խնայելով տարեկան 24 մլրդ դոլար: Ներկայումս ԱՄՆ-ում տղամարդիկ օրական, միջին հաշվով, օգտագործում են 10,4, իսկ կանայք՝ 7,3 գ աղ, ընդ որում՝ այդ ցուցանիշը գնալով մեծանում է: Մինչդեռ, եթե աղի ամենօրյա օգտագործման չափը կրճատվի նույնիսկ 1 գրամով, ապա երկրի մասշտաբով դա կօգնի կանխել 11 հազարից մինչև 23 հազար ինսուլտ, 18-35 հազար ինֆարկտ և 15-32 հազար վաղաժամ մահվան դեպքեր:

Բժիշկ Քրիստեն Բաբինս-Ղոմինգոն կարծում է, որ անհրաժեշտ է ՁԼՄ-ների միջոցով միջոցառումներ ձեռնարկել աղի օգտագործումը նվազեցնելու ուղղությամբ: Նրա հաշվարկներով յուրաքանչյուր ամերիկացու կողմից օրական 3 գրամով ավելի քիչ աղ օգտագործելը նույնքան կբարելավի ազգի առողջական վիճակը, որքան եթե ծխողների 50%-ը մեկընդմիջտ հրաժարվի կործանարար այդ սովորույթից: Աղի չարաշահումը հանգեցնում է գիրացման, սրտանոթային հիվանդությունների, արյան բարձր ճնշման և այլ հիվանդությունների:

Ամերիկյան կառավարությունն արդեն ձեռնամուխ է եղել համապատասխան ծրագրի մշակմանը: Բժիշկները համոզված են, որ սննդի մեջ աղի օգտագործման կրճատման ազգային ծրագիրը խիստ դրական ազդեցություն կունենա երեխաների առողջության վրա և կկրճատի ստամոքսի կան երկվանների քաղցկեղի, սրտային անբավարարության և օստեոպորոզի դեպքերը:

Բջջային հեռախոսի վրա մանրէներն ավելի շատ են, քան կոշիկի ներբանի տակ

Մանչեստրի համալսարանի մանրէաբանները պարզել են, որ բջջային հեռախոսի իրանի վրա 5 անգամ ավելի շատ մանրէներ կան, քան զուգարանակոնքի նստատեղի վրա կան կոշիկի ներբանի տակ: Այդ մանրէների թվում է նույնիսկ ոսկեգույն ստաֆիլակոկը, որ կրում է աշխարհի բնակչության 20 տոկոսը: Ոմանք դրանից չեն վախենում, բայց թույլ ինուֆիտոս ունեցողներին այդ մանրէն սպառնում է տարբեր բաներով՝ մաշկային թեթև հիվանդությունից մինչև մենինգիտ: Լոնդոնի «Սան» թերթը նշում է, որ գիտնականները բջջային հեռախոսի վրա մանրէների այդ առատությունը բացատրում են նրանով, որ հեռախոսի իրանի վրա ցայտում են թքի մասնիկներ, որոնք պարունակում են բերանի խոռոչում գտնվող մանրէների բոլոր տեսակները: Բացի դրանից, հեռախոսի վրա միկրոօրգանիզմներ են հայտնվում մարդկանց կեղտոտ ձեռքերից:

Եվս մեկ հանգամանք է հեռախոսը տաք տեղում պահելը: Խոսելիս և լիցքավորելիս այն ավելի շատ է տաքանում: Իսկ ջերմությունից մանրէները էլ ավելի լավ են բազմանում: Գիտնականները խորհուրդ են տալիս այս ամենը կանխելու համար օրական երկու անգամ հեռախոսը մաքրել սպիրտային հատուկ անձեռոցիկներով, որոնցով մաքրում են մնացյալ կազմաօճիկները:

Սակայն վտանգավոր են ոչ միայն բջջային հեռախոսները, այլև ձեռքերի չորացման սարքերը, կանաչի պայուսակները, կոսմետիկան և ցնցուղը: Գիտնականները խորհուրդ են տալիս ձեռքերը սրբել թղթե անձեռոցիկներով, պայուսակները չդնել հատակին և խոհանոցի սեղանի վրա, լոգարանում չպահել դեկորատիվ կոսմետիկա և 6 ամիսը մեկ փոխել ցնցուղը: Ցնցուղի փողորակի մեջ 100 անգամ ավելի շատ մանրէ կա, քան խոհանոցի ծորակի մեջ: Ուստի լողանալուց առաջ պետք է ջուրը հոսեցնել գոնե կես րոպե:

Մանրէների բազմացման առավել նպաստավոր վայրերից մեկն էլ ավտոմեքենան է. վարորդների ընդամենը 2 տոկոսն է դրա ներսը մաքրում ամեն շաբաթ:



Պլանշետային համակարգիչներ

Orange-ը սկսեց iPad սենսորային էկրանով պլանշետների վաճառքն իր խանութներում՝ այսպիսով դառնալով հեռահաղորդակցության առաջին ընկերությունը Հայաստանում, որն առաջարկում է պլանշետային համակարգիչներ: Apple ընկերության այս կախարդական հեղափոխական սարքը թույլ է տալիս ամենուր օգտվել Ինտերնետից, կարդալ և ուղարկել նամակներ, դիտել լուսանկարներ, ֆիլմեր, երաժշտություն լսել, խաղալ, կարդալ էլեկտրոնային գրքեր և դեռ շատ ավելին:

iPad-ը ներառում է բազմաթիվ նորարարական ծրագրային հավելվածներ (application), որոնք հատուկ ստեղծվել են iPad-ի համար: iPad-ով կարելի է օգտագործել նաև App Store-ի ավելի քան 140.000 հավելվածներ: Սողելներն առաջարկվում են 290.000-ից 470.000 դրամով:

iPad կարելի է ձեռք բերել Orange-ի «Ինտերնետ Զինայի» սակագնային պլաններից յուրաքանչյուրի հետ բաժանորդագրությամբ՝ iPad-ի համար նախատեսված micro-SIM քարտով կամ առանց բաժանորդագրության:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը հայտարարում է մրցույթ Կերպարվեստի բաժնի, ժողովրդական երաժշտության բաժնի և Սփյուռքահայ արվեստի բաժնի վարիչների թափուր տեղերի համար:

Անհրաժեշտ փաստաթղթերը՝ հայտարարության օրվանից մեկ ամսվա ընթացքում, պետք է ներկայացնել հետևյալ հասցեով՝ Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24գ, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ, հեռ. 58-18-51:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքը հայտարարում է Թորոս Թորամանյանի անվան մրցանակաբաշխություն: Մրցանակը շնորհվում է վերջին 4 տարվա ընթացքում հրատարակված գիտական հիմնարար աշխատությունների համար, որոնք վերաբերում են հայկական ճարտարապետության ուսումնասիրությանը և նպաստում հայագիտության զարգացմանը: Մրցանակաբաշխությանը կարող են մասնակցել ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ արտերկրի գիտնականները: Առաջադրված աշխատությունները՝ համապատասխան հիմնավորմամբ, սույն հայտարարության հրապարակումից երկու ամսվա ընթացքում ներկայացվում են ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունք, հետևյալ հասցեով՝ 0019 Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24, հեռ. 527722:

ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքը հայտարարում է Թորոս Թորամանյանի անվան մրցանակաբաշխություն: Մրցանակը շնորհվում է վերջին 4 տարվա ընթացքում հրատարակված գիտական հիմնարար աշխատությունների համար, որոնք վերաբերում են հայկական ճարտարապետության ուսումնասիրությանը և նպաստում հայագիտության զարգացմանը: Մրցանակաբաշխությանը կարող են մասնակցել ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ արտերկրի գիտնականները: Առաջադրված աշխատությունները՝ համապատասխան հիմնավորմամբ, սույն հայտարարության հրապարակումից երկու ամսվա ընթացքում ներկայացվում են ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունք, հետևյալ հասցեով՝ 0019 Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24, հեռ. 527722: ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունք

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան (ՀՀ ԳԱԱ), Համաշխարհային հայկական կոնգրեսը (ՀՀԿ) և Ռուսաստանի հայերի միությունը (ՌՀՄ) 2010 թ. հայտարարում են «Լավագույն գիտական աշխատանք» մրցույթ երիտասարդ գիտնականների (մինչև 35 տարեկան) համար: Սահմանված են 14 մրցանակներ:

- ֆիզիկա
- մաթեմատիկա և մեխանիկա
- ինֆորմատիկա
- տեխնիկական գիտություններ
- քիմիա
- կենսաբանություն
- պատմություն
- սոցիոլոգիա
- քաղաքագիտություն և իրավագիտություն
- երկրաբանություն
- արվեստ, լեզու և գրականություն
- արևելագիտություն
- տնտեսագիտություն
- հայագիտություն և ազգագրություն

Մրցանակակիրները կպարգևատրվեն մինչև 700 000 (յոթ հարյուր հազար) դրամ դրամական պարգևներով և կարժանանան ՀՀ ԳԱԱ, ՀՀԿ և ՌՀՄ պատվավոր դիպլոմների: Մրցույթին կարող են ներկայացվել միայն 2008-2009թթ. հրատարակված գիտական հոդվածների շարքը և մենագրությունները, կամ արտոնագրված աշխատանքները:

Ներկայացվող փաստաթղթերի փաթեթը պետք է ներառի այն կազմակերպության գիտական խորհրդի որոշումը, որտեղ աշխատում է հայտատուն: Փաստաթղթերը կարող են ներկայացվել նաև տվյալ բնագավառում գործող որևէ այլ կազմակերպության գիտական խորհրդի միջոցով: Մրցույթի արդյունքները կհայտարարվեն 2011թ. ապրիլ ամսին:

«Լավագույն գիտական աշխատանք»-ի համար Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի (ՀՀ ԳԱԱ), Համաշխարհային հայկական կոնգրեսի (ՀՀԿ) և Ռուսաստանի հայերի միության (ՌՀՄ) կողմից 2010թ. հայտարարված մրցույթին ներկայացվող փաստաթղթերի ցանկը.

1. հայցողի դիմում-հայտը,
2. գիտական խորհրդի որոշումը
3. անձնագրի պատճենը,
4. կենսագրական տվյալները (resume/CV),
5. վերջին հինգ տարում հրատարակված աշխատանքների ցանկը,

6. երաշխավորագրեր՝ տրված 3 մասնագետների կողմից (նախընտրելի է, որ նրանցից մեկը լինի արտասահմանից): Երաշխավորագրերը ներկայացնել մասնագետի ստորագրությամբ,

7. մրցանակի ներկայացվող աշխատանքը: Վերոնշյալ 4, 5, 6 և 7 կետերում նշված փաստաթղթերը ներկայացնել վավերացված իրավասու անձի/մարմնի կողմից երեքական օրինակով առաջինը բնօրինակ, իսկ մնացածները պատճենահանված:

Եթե ներկայացվող աշխատանքը կատարված է համահեղինակությամբ, դիմում-հայտին անհրաժեշտ է կցել տեղեկանք, որն արտացոլի համահեղինակների մասնակցության չափը և ստորագրված լինի համահեղինակների կողմից:

Փաստաթղթերի ներկայացման ժամկետը՝ 2010 թ. նոյեմբերի 15-ից մինչև հունվարի 15-ը 2011թ.:

Հարցերի պարզաբանման համար դիմել ՀՀ ԳԱԱ «Գիտության զարգացման հիմնադրամ»:

Երևան, 0019, Բաղրամյան պողոտա, 24, հեռ.՝ 52-75-30, 52-70-31

Մրցույթային հանձնաժողով

Ներկայացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ձևերը կարելի է ստանալ ՀՀ ԳԱԱ «Գիտության զարգացման հիմնադրամի» գրասենյակից կամ Հիմնադրամի կայքի միջոցով <http://sdfund.sci.am>.

Փաստաթղթերի ներկայացման ժամկետը նոյեմբերի 15-ից մինչև հունվարի 15-ը 2011թ.:

Հասցեն: 0019, Մարշալ Բաղրամյանի պող. 24, Երևան, Հայաստանի Հանրապետություն: Հեռ. + (37410) 527530, + (37410) 527031:

Գիտություն

Գլխավոր խմբագիր՝ Ա. ՏԵՐ-ԳԱԲՐԵԼՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24բ, հեռ. 56-80-14: Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:
Մտորագրված է փրկագրության 23.11.2010 թ.:

"ГИТИУМОН" ("Найка") газета НАН РА